

20(595)

4.08.2020

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխավոր, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

Պաշտոնական

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ



ԱՅ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը հուլիսի 31-ին հանդիպել է «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի Արցախի գրասենյակի ներկայացուցիչների՝ Արցախի ծրագրերի համակարգող Յուսիկ Սարգսյանի և գործադիր տնօրենի օգնական, ծրագրերի ղեկավար Մեղիմա Յուսիանիայանի հետ: Հանդիպմանը ԹԲՀ ներկայացուցիչները պատմել են հիմնադրամի կողմից իրականացված և ընթացիկ ծրագրերի մասին, որոնք առնչվում են կրթության և մշակույթի ոլորտին: Հիմնադրամը ներկայումս գործունեություն է ծավալում Քաջաթաղի հարավային բևուռ՝ Ալաշկերտ, Կովսական, Միջնական, Վան, Մուշ համայնքներում:

ԹԲՀ-ի նախաձեռնությամբ Քաջաթաղի շրջանի Վան գյուղում կառուցվել է Ուսուցչի տուն, որը տրամադրվելու է գյուղ ուղեգրված ուսուցիչներին: Ծրագիրը պիլոտային է, հիմնադրամն առաջիկայում քննարկելու է դրա շարունակականության հարցը: Կովսականում հիմնվել է հանրային այգի, որը կարող է նաև մշակութային միջոցառումների համար հարթակ հանդիսանալ:

Քաջաթաղի շրջանի մի շարք դպրոցների համար հիմնադրամի միջոցներով ձեռք են բերվել քիմիայի ու կենսաբանության լաբորատոր սարքավորումների կոմպլեկտներ, Այգեկ ու Մխանց համայնքների դպրոցականների համար՝ պլանշետներ: Հաղորդի շրջանի Դրախտիկ համայնքում ստեղծվել է համակարգչային դասարան՝ ժամանակակից տեխնիկական միջոցներով:

ԿԳՄ նախարարի հետ հիմնադրամի ներկայացուցիչները քննարկել են նաև համագործակցության հեռահար ծրագրեր: Մասնավորապես.

ԹԲՀ-ում քննարկման ու մշակման փուլում է Քաջաթաղի շրջանի մի շարք համայնքներում դպրոցամերձ այգիներ գնելու ծրագիրը: Այդ այգիները ուսուցողական, փորձարարական նպատակներով տրամադրվելու են դպրոցներին, որպեսզի աշակերտները գործնական հմտություններ ձեռք բերեն հողի հետ աշխատանքում, ինչպես նաև փորձարկեն իրենց նոր մտահղացումները:

Հիմնադրամի մեկ այլ ծրագրով նախատեսվում է Արցախի հանրակրթական դպրոցներից մեկին բրեկետներ պատրաստելու սարք տրամադրել, որը կշահագործվի հենց աշակերտների կողմից համապատասխան մասնագետի օգնությամբ: Իսկ ուսուցման գործընթացում արտադրված բրեկետներով կլուծվի տվյալ դպրոցի ջեռուցման հարցը:

ԿԳՄ նախարարը հիմնադրամի ներկայացուցիչների հետ քննարկել է նաև Քաջաթաղի շրջանի դպրոցականների մի մասի համար սմարթֆոնների ձեռքբերման հարցը, որոնք կտրամադրվեն աշակերտներին, եթե նոր ուսումնականում, համավարակի վտանգով պայմանավորված, ստիպված լինեն շարունակել հեռավար ուսուցումը: Հիմնադրամի ներկայացուցիչները խոստացան քննարկել հարցը և հնարավորության դեպքում աջակցել նախարարությանը:

ԿԳՄ նախարարը ողջունել է «Թուֆենկյան» հիմնադրամի ծրագրերն ու նախաձեռնությունները և հավաստիացրել, որ փոխարդյունավետ համագործակցությունը շարունակական կլինի:

ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ

Դպրոցականների առարկայական օլիմպիադան հանրակրթական ամենավարկանիշային ինտելեկտուալ միջոցառումն է, որն ավանդաբար անցկացվում է ամեն տարի, և լավագույն արդյունքների հասած մասնակիցները պարգևատրվում ու խրախուսվում են ամենաբարձր մակարդակով: 2019-2020 ուստարվա առարկայական օլիմպիադան 16 առարկաներից անցկացվել է ըստ ժամանակացույցի, սակայն համավարակով պայմանավորված՝ մրցանակային տեղեր գրավածների պարգևատրման արարողությունը հետաձգվել էր:

Հուլիսի 29-ին Ստեփանակերտի Խ.Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցում ԱՅ կրթության, գիտության և մշակույթի նախարար Լուսինե Ղարախանյանի մասնակցությամբ տեղի ունեցավ մայրաքաղաքի դպրոցականների պարգևատրումը, իսկ շրջանների մասնակիցներին տեղի ղեկավարության կողմից իրականացվել է տարբեր օրեր:

Ողջունելով մրցանակակիրներին՝ ԱՅ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանն ասաց, որ տարեցտարի մեծանում է առարկայական օլիմպիադային մասնակցող դպրոցականների թիվը, այն ամենապահանջված ինտելեկտուալ միջոցառումն է: «Գիտելիքը ուժ է իշխանություն է: Նաև գիտելիքի իշխանությամբ ենք գծում և պահում մեր հայրենիքի սահմանները», - ասաց նախարարը՝ մաղթելով, որ դպրոցականները միշտ պա-



քարեն և ինքնահաստատվեն գիտելիքի և մնայուն արժեքների մրցահարթակներում. «Այսօր աշխարհը գնահատվում է ստեղծարարության ցուցիչներով: Ինչքան դուք ստեղծարար եք, ինտելեկտուալ եք, այնքան ունեք իշխանություն, այնքան կարող եք փոխել ամեն ինչ»:

Շնորհավորելով և նրանց հանձնելով դիպլոմներ, գովասանագրեր, դրամական պարգևներ՝ Լ. Ղարախանյանը նաև շնորհակալություն հայտնեց այն ուսուցիչներին, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայում գիտելիքներ տալ աշակերտներին և ասաց, որ պետությունն ամեն ինչ անում է, որ ուսուցիչ

լինելը դառնա գրավիչ, ինչպես շատ երկրներում է: Գնահատելով մանկավարժների աշխատանքը՝ նա ասաց. «Ուսուցչությունը մեծ դեր ունի մատաղ սերնդին ժողովրդավարական և ազգային արժեքներ փոխանցելու գործում: Նաև ինտելեկտուալ աշակերտությունը մեծ դեր պետք է ունենա երկրում քաղաքացիական հասարակության ձևավորման, ազգային արժեքների կերտման գործում: Դուք կարող եք թելադրել պայմաններ

և պահանջել սկզբունքներ, որոնք խարսխված լինեն մնայուն արժեքների, բարոյականության և գիտելիքի իշխանության վրա», - ասաց նախարարը:

Լ. Ղարախանյանը վստահեցրեց, որ կրթության, գիտության և մշակույթի նախարարությունը պատրաստ է և ունի մշակված քաղաքականություն՝ ի կատար ածելու կրթության, գիտության հետ կապված սովորողների բոլոր մեծ ու փոքր մտահղացումները և եզրափակելով՝ կոչ արեց. «Առաջ դեպի ստեղծարարություն»:

Սեփ. Լրավորություն

ԳՈՐԿՆՈՒՑԻՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Դպրոցականների առարկայական օլիմպիադայի՝ Քաջաթաղի շրջանի հանրակրթական դպրոցներ 2019-2020 ուստարվա մասնակիցներից եղան նաև ԱՅ հանրապետական և շրջանային փուլերում բարձր ցուցանիշ գրանցողներ և արժանացել են ԱՅ ԿԳՄ նախարարության և շրջվարչակազմի պարգևների՝ դրամական, պատվոգիր, գովասանագիր, դիպլոմ: Կապված Նոր կորոնավիրուսի տարածման հետ՝ պարգևների հանձնումը հետաձգվեց: Հուլիսի 25-ին օլիմպիադայի մասնակիցներին, ովքեր արժանացել են պարգևների, ընդունեց շրջվարչակազմի ղեկավար Արտյոմ Սարիբեկյանը: Շրջվարչակազմի նիստերի դահլիճում կայացավ պարգևների հանձնման արարողությունը, որին ներկա էին նաև դպրոցների տնօրեններ,

ուսուցիչներ: Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը ներկայացրեց հաղթողներին, շնորհավորեց, կարևորեց առարկայական օլիմպիադայի դերը դպրոցականների համար: Տեղեկացրեց, որ օլիմպիադայում բարձր արդյունք ցուցաբերած աշակերտներից 3 հոգի արդեն ավարտել են դպրոցը, հանձնել քննություն և ընդունվել ԱՅ և ՀՀ բուհեր: Շրջվարչակազմի ղեկավարը ողջունեց ներկայից, շնորհավորեց և հանձնեց պարգևները: Հույս հայտնեց, որ մեր աշակերտները կշարունակեն լավ սովորել, օրինակ կդառնան շատերի համար:

Շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը, որը մասնագիտությամբ մաթեմատիկայի ուսուցիչ է, նույնպես կարևո-


րեց օլիմպիադաներին մասնակցությունը: Շնորհավորեց բոլորին, մաղթեց հետագայում ավելի բարձր ցուցանիշներ գրանցել:

Շրջանավարտներից Քարեգաի միջնակարգ դպրոցի աշակերտ Դավիթ Նազարյանը ՆԶՊ առարկայից հանրապետական փուլում ցուցաբերել է բարձր արդյունք և պարգևատրվել ԱՅ ԿԳՄ նախարարության դիպլոմով: Անցած տարի նույն առարկայից հանրապետական փուլում գրավել է առաջին տեղը: Արդեն հանձնել է միասնական քննություն և ընդունվել է ԱրՊՀ իրավագիտության բաժին: Շուտով գորակոչվելու է Հայոց բանակ: Ընտրել է «Ես եմ» ծրագիրը: Դպրոցի տնօրեն Գևորգ Մնացականյանը գովեստով խոսեց Դավթի մասին. մշտապես աչքի է ընկել կարգապահությամբ, գիտելիքներ

րով: Բերձորի Վահան Ջատիկյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցի շրջանավարտ Լուիզա Հակոբյանը կենսաբանությունն առարկայից գրավել է երրորդ տեղը: Արդեն ուսանողուհի է. ընդունվել է Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի բուժական գործ բաժինը: Նույն դպրոցից Անահիտ Ավագյանն աշխարհագրությունն առարկայի օլիմպիադայում գրավել է 2-րդ տեղը: Ուսումը շարունակելու է նույն մասնագիտությամբ: Այս կրթօջախից արդեն տասներկուերորդի Հայկ Դավթյանը ռուսաց լեզու առարկայից հանրապետական փուլում երրորդն է: Նպատակն է՝ ընդունվել բժշկական համալսարան և դառնալ վիրաբույժ: Աղաձորի Հակոբ Խաչատրյանի անվան միջնակարգ

ԱՐՏԱՁԵՆ ՂԱՐԻՅԱՆ

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ



ԱՅ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը ցավակցական ուղերձ է հղել հայտնի արձակագիր Արտաշես Ղարախանյանի մահվան կապակցությամբ, որում ասվում է.

«Կյանքից հեռացել է հայ արձակի տաղանդավոր ներկայացուցիչ Արտաշես Ղարախանյանը, մարդ, ով իր բացառիկ նվիրվածությամբ, վարակիչ հայրենասիրությամբ, իր ստեղծած արձակով առանձնահատուկ հետք է թողել հայ մշակույթի ոսկե գանձարանում:

Անավարտ երկխոսություն. այսպես կանվանեի իմ հրաժեշտի խոսքը, որովհետև մենք նախատեսել էինք գրուցել գրականության, մշակույթի, հոգեբանական խոր ենթաշերտեր ունեցող նրա արձակի մասին, նրա անկեղծ տողի և յուրաքանչյուր ընթերցմամբ նորովի բացահայտվող նրա հերոսների մասին:

Արտաշես Ղարախանյանի կորստով որք կմնա մի զարմանալի համեստություն, բազմախոս մի լուռություն, որի մեջ արարման ու նվիրումի այնքան գույներ կան: Հայրենի եզերքի նվիրյալ էր Ղարախանյանը և անխոս բառավորեց իր սերն ու սպասումները:

Խոնարհումս, թող անմար լինի Ձեր լուսե հիշատակը»:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարություն

ԱՆՄԱՐԶՆ ԻՐ ՄԵՋ ՏԵՂԱՎՈՐԱԾ

Անցյալ դարի 60-70-ական թվականներին Հայաստանում գրողների մի նոր սերունդ ի հայտ եկավ, որը թարմ շունչ հաղորդեց մասնավորապես հայ գրական արձակին: Հրանտ Մաթևոսյան, Մուշեղ Գալշոյան, Ջորայր Խալափյան, Ռուբեն Հովսեփյան... Այս ցանկը կարելի է իրավամբ շարունակել, և նրանց շարքում, անշուշտ, արժե նշել Արտաշես Ղարախանյանի անունը: Մի գրող, որը թեպետ իր շուրջը գրաքննադատների էլիտար հանրույթ չձևավորեց, սակայն կարողացավ ապահովել ընթերցողական բարձրաճաշակ լսարան:

Դա հատկապես «Տոհմական»-ի ու «Պատրանք»-ի հրատարակումից հետո էր: Պերֆեկցիոնիզմից զուրկ, բայց դեմուրգամ մերքին էներգիայով առեց-ցուն ստեղծագործական տաղանդ ունակ եղավ կառուցելու գեղագիտական մի ուրույն աշխարհ, որտեղ գրողի դիտանկյունը միանգամայն օրիգինալ ու ինքնատիպ էր: Դա՛ այն պարագայում, երբ մաթևոսյանական ու զալշոյանական գրական նորաճը կարծեք ազատ տեղ չէր թողել գրական այլ հավակնությունների համար:

Արտաշես Ղարախանյանը բնավորությանը հարիր շատ համեստորեն «ոտքի տեղ արեց» սերնդակիցների կողքին: Նման դեպքում սովորաբար ասում են՝ համեստությունը գրողի ոտքի առաջ ընկած խոթ է, որը մա պարտավոր է հաղթահարել առանց կողմնակի աջակցության: Կարողացավ Ղարախանյանը հաղթահարել այդ խոթը. մենք թերևս կարող ենք այս առնչությամբ ասել, որ նրա ստեղծագործական տաղանդն ամբողջությամբ չի իրացվել, թեև իբրև գրչի մարդ՝ նա բառի հմուտ որմնադիր էր, գիտեր որը որտեղ դնել, ինչ դասավորությամբ ու ինչ դիրքով: Իսկ գրողական երևակայությունը, հարկ է ընդգծել, անչափելի սահմաններ ուներ: Այդպիսի ստեղծագործական պաշարով հնարավոր էր գրական անդաստանում բազմուղի ճամփորդել, բայց ինքը նկատելի սակավագիր մնաց, անգամ չթարգմանվեց պատշաճորեն:

Գո՛ւցե մեղավորը Նորին մեծություն ժամանակն էր, որովհետև դարավերջին հասարակարգ փոխվեց, արժեքներ քանդվեցին, սկզբունքներ տրանսֆորմացվեցին... Ղարախանյանը երևանից հայրենի գյուղ եկավ ինքնագտնման համար: Պաթետիկ իմաստով դա գովելի է, անշուշտ, բայց արդյո՞ք գյուղը վերաբացեց Ղարախանյանին բնատուր տաղանդը: Գրողի նոր երկու գրքերը, որոնք լույս տեսան արդեն Արցախում, հեղինակի բնատուր շնորհի պարզ արտահայտումն էին: Ընդ որում, նա ծննդավայրում դրսևորեց նաև բանաստեղծական շնորհքը՝ ինչ-որ տեղ սահյանական, ինչ-որ տեղ թունայանա-

կան փիլիսոփայական անհարթ ընդգրկումներով: Սակայն դա ստեղծագործական իմաստով կոմենսալիզմ չէր, այլ իր իսկ գեղագիտական սինթեզի հաստատում:

Լուրջ գրաքննադատությունը, գնահատելով հանդերձ Արտաշես Ղարախանյանի գրական ժառանգությունը, ակնկալում էր հեղաբեկիչ շրջադարձեր, որն այդպես էլ տեղի չունեցավ և ցավալիորեն այլևս տեղի չի ունենա, քանզի մեր տաղանդավոր հայրենակիցն այլևս մեզ հետ չէ: Նա հրաժեշտ տվեց կյանքին՝ ստեղծագործական կրակն ամբողջությամբ չմարած: Անհնար է, ի վերջո, աշխարհն իր մեջ տեղավորել, բայց քիչ ասելիք ունենալ աշխարհին:

Երբևէ, ավելի ստույգ՝ Արտաշես Ղարախանյանի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, այսպիսի տողեր էի գրել. «Մի ամբողջ հագեցած կյանք է ապրել գրողը՝ իր համեստ ու իմաստուն հերոսների պես աննկատ-նկատելի»: Եվ նա կշարունակի այդպիսին ապրել իր պատմվածքներում ու իրեն ճանաչողների հուշերում:

Թող Աստված լուսավորի նրա հարուստ-բարի հոգին:

Կիմ ՉԱԲՐԻԵԼՅԱՆ
Գրող, բանասիրական գիտությունների թեկնածու

Արտաշես ՂԱՐԻՅԱՆ

ԻՆՔՆԱԶՐՈՒՅՑ. ԻՆՔՆԱԴԱՏՄԱՆ ՓՈՐՁ

Իմը պատմվածքն է: Նրանում ապրում է իմ մարդը, ես էլ: Իմաստուն խորհրդատվության մեջ արարվում է երկիրը՝ միշտ սկանջալուր այստեղ ապրողի կանչերին: Ո՞վ է, որ ի գորու է գրելու այն բառը, որը նկարեն է, ընկալելի է անուձ ծառի ու երկնի թռչունի մտածությունը, մեղեդիացնում է երկրի ու բնակչի հավերժական հունը տիեզերական անհայտությանը, կարողանալու է հայտնության մղել այդ անհայտը, որպեսզի միշտ մնաս հմայված նրա հողովություն՝ գեղարվեստի տողում ու ինչուևնում:

Սեծարենցը հուշում է՝ փորձիր ինքդ էլ, ինչպես ես...

- Այո, պատմվածքը: Ինչու՞ միայն այն և ոչ մի այլ ժանր էլ արձակում, ասենք՝ վիպակը: Նկատի ունեն, որ ամենահակիրձ գրվածքը էլ նյութի ու գեղարվեստի պաշար է պարունակում, որը բացելիս-փռելիս կլինի հենց հարցիս ակնկալածը: Վախենում ես, որ կարող է ասելիքի խտությունը կորսվի, ընթերցողի գննին ընկալման հմայքը ջրիկանա: Դա ես նմանեցնեմ հորդահոս գետի զսպվածությանը կիրճում, ինչը հետո փռվելու է հարթությունում: Անցե՛լ է հարթագրության ժամանակը:

- Եվ անցել է, և՛ ոչ: Այդ հարցը գրողին կարելի էր տալ հարյուր, երկու հարյուր տարի առաջ էլ, երբ բուռն ծաղկում էր ապրում արձակագրությունը Եվրոպայում և Ռուսաստանում: Դիտենք Տոլստոյի և Դոստոևսկու դեպքում: Առաջինը նյութը շարադրում է շատ մանրակրկիտ՝ չվրիպելով մանրամասն իսկ կերպարը ստեղծելիս կամ գործողության տվյալ դրվագը: Դոստոևսկին մի տեղ նույնիսկ հեզմանքով նկատում է, թե Տոլստոյը նկարագրում է կնոջ կրծքի կոճակն էլ: Նա լայն փռվածքի վրա ստեղծում է մարդկային հարաբերակցության պատմությունը, ինչպես Մաթևոսյանն է նկատել՝ տողը տողի վրա, չշտապելով: Հոգու դրաման, կրքերի բախումները բնականորեն գնում են իրենց հանգուցալուծումներին: Մեծ գրողի վեպ - էպոպեան հարթագրության մեջ է, բայց մեծ գեղարվեստում: Այս է, որ անհասանելի է մնացել իրեն ժամանակակից թե հետագա շատ գրողների հաստափոր գրվածքներում: Ուրեմն՝ տաղանդ: Առաջին պահ ինչո՞վ այդպիսին չեն Դոստոևսկու գործերը, իհարկե, իր ոճում: Այս

գրողի գրելաձևում, սակայն, ինչպես պարզ-կա երկնքում են ամպրոպալից ամպերը խմբվում, դարձյալ տողը տողի վրա ահագնորեն կուտակվում են մարդկային հզոր լիցքերը՝ բախվելով՝ կայծակում այնպիսի դրամատիկ ուժով, որ ընթերցողը այնուհետև մնում է քննելիս, թե տաղանդը ո՞նց է բացահայտում հոգու անսպառ բռնկումները: Գլուխ առ գլուխ հասունանում է ողբերգական պատմությունը, ինչն էլ մարդու ճակատագիր է: Մեծ գրականության՝ անցյալ թե ներկա, ճշմարիտ ճանապարհն է: Ուրեմն՝ էլի տաղանդ: Այնպես որ գեղարվեստական խտացումը առկա է և՛ հարթագրության, և՛ զսպված ոճի բացահայտումներում: Ինչու՞ չէ, մեր օրերում էլ գրողը կարող է խիզախել «հին» դասական կարգ-կանոնով, դրան միշտ է պատրաստ ընթերցողը, եթե ստեղծագործությունը միտված է նրա ընկալումների խորքայնությանը: Մեր օրերում, սակայն, տողի, մտքի, ոճի խտացումները այսօրվա մարդու սեղմված ժամանակի ու կենսագործունեության թելադրանքն են: Այո, իմ պատմվածքը միտված է մտքի ու բառագոյացման խտության: Երբ հետ են դառնում, թե՛ հիսուն տարի առաջ այդ ժանրին այդպես դառնալու անսխալ էր, կարծում են, որ՝ այո: Քանիցս են նշել, որ ինձ իմ թեմային ուղեկցողը Հրանտ Մաթևոսյանն էր երևանի Գնունի փողոցի տպարանի մեր համատեղ սրբագրական աշխատանքում: Այդ ժամանակ մեր սերնդի երիտասարդ գրողները հրապուրված էին արտասահմանյան գրողների մաներաներով, բայց ոչ Հրանտը: Մինչ այդ ընթերցել էի նրա «Անհիժոր» ակնարկը և զգացել, որ

պետք է «նմանվել» այդ ուղղությանը, և առաջին՝ «Իմ հեռու աստղերը» պատմվածքը հավանեց ու արդեն որպես «Գրական թերթի» աշխատող տպագրեց նա: Այն դուր եկավ գրական միջավայրին: Այդտեղից էլ բոլոր գրածներիս թեման իմ գյուղն է՝ մերթ Թաղաշատ, մերթ Թաղեր անվանումներով: Ես մեծ հեռաստան չէի բացելու, հենց սկզբից էի զգում, որ թեկուզ վիպակի չէի գորելու: Սակայն պիտի էր հանդգնում՝ մի քանի էջանոց պատմվածքը եթե գրված չլիներ ասելիքով խիտ, խոր զգացման չնդեր, լինելու էր պարզունակ, մեկ շնչով ընթերցվող անցողիկ բան: Շատերն են ինձ ասում, որ գրածդ մի ընթերցելով ամբողջությամբ տեղ չի հասնի, և դա ուրախացնում է: «Ինչու՞ չես ծավալում, վիպակ դարձնում», - ասում են: Ես այդքանը մտածում էի, բայց չէի ձեռնարկելու, քանի որ չէի կարողանալու գատվել ոճի կաշկանդումից: Ոճը, ինչպես ասված է, ինքը մարդն է, ձեռքս չէր գնալու թեկուզ մեկ անհարազատ բառ գրելու: Բայց և համոզված եմ, որ եթե գրածդ կառուցիկ ու ճշգրիտ է, առանց բառի իսկ խճողման, պարզ է ու ընկալելի: Թող շարժի ընթերցողի միտքը, հասցնի գեղարվեստի հմայքներին, եթե, իրոք, դրանք առկա են գրվածքում:

- Գրողներից ու՞մ ես համարել հավերժ ճամփորդներ: Նրանցից գրել սովորե՞լ ես:

- Նրանք շատ - շատ են, բայց նախընտրածներս են Չեխովը, Թունայանը, Դոստոևսկին, Սարոյանը, Շոլոխովը, Բակունցը, Մաթևոսյանը... Ինչպես տեսանելի է՝ ոճով ման և տարած գրողներ. նրանք բոլորն են հեռավոր ապագայի ճամփորդներ: Մի անգամ ասել եմ, որ ես բնատուր տաղանդով օժտված չեմ եղել, գրականության բուռն սերն ու գրողական տենչն են ինձ հետամուտ պահել ստեղծագործելու: Բժախնդիր տարվում էի, թե այս ու այն գրողն ինչպես է անում իր գործը, մի տեսակ դաս էի առնում բոլորից: Ամուղղելի հրապուրված էի ամեն լավով : «Սովորում էի» գրել: Սա կարծես անհատույց չի թողնում ջանքը: Նաև գիտեի, որ եթե մի որոշ-

ակի արժեքի հասել էի, այն ինձ ձեռագրի անհատականություն էր ապահովելու: Ինչպե՞ս չսովորեց գեղեկական կյանքի ու բնականորեն թունայանական, շոլոխովյան ու բակունցյան վերարտադրումներից, կերպարացնելու չեխովյան հուճորից, Դոստոևսկու ցնցող դրամատիզմից, Սարոյանի ծփուն մարդասիրությունից, Պարոնյանի այրող հեզմանքից, ինչը կոչված է մաքրելու մարդուն անհաճո դրսևորումներից: Նրանք գեղարվեստականության սպասավորներն էին, ո՛չ, ասենք, մտավոր հոսքերի գրականության քրմեր, ովքեր փորձում են իբր նոր ուղղություններ բացել: Նրանք չեն օգտվում կերպարին բնորոշ ազգային կոլորիտայնությունից, հուճորառատ խոսքից, մարդու առօրյա պահվածքից բխող մարմնասաների գեղարվեստացումից, որոնք կենդանի շունչ են հաղորդում գրածին: Չափած-ձևած հոգեբանական ինտելեկտուալ մտավոր մարդկանց մի խմբի բաժինն է միայն: Թող զարմանալի չթվա, համաշխարհային հռչակ վայելած, Նոբելյան մրցանակի արժանացած շատ ստեղծագործություններ, իմ համոզմամբ, հեռու թե մոտ ապագաներում կորցնելու են վաստակած փառքը, գրավչությունը: Որովհետև թեկուզ մեծ՝ մի ժամանակահատվածի համար են: Մոդեռնիզմ, պոստ-մոդեռնիզմ, մոգական ռեալիզմ, բայց՝ մեկ ու միակ հավերժական ռեալիզմ: Անենամոր Սարոյանը մի քիչ Թունայան չէ՞, մի քիչ Չեխով...

- Պատմվածքներիդ արտահայտիչները, որոնք կգնահատի ընթերցողը:

- Մտահղացումը ապրած կյանքից՝ սկսած մանկության հուշումներից կամ մարդ-բնություն քո միջավայրից, եթե նույնիսկ կտրված ես այնտեղից: Չեմ ընդունում այն պատմվածքը, որի հեղինակը, ճամփորդելով այս ու այն երկրում, գրի է առնում զլխով անցած դեպքը: Ինչքան էլ «հետաքրքրաշարժ»՝ այն մնալու է որպես պատմված դեպք, քանի որ չի շնչավորելու օտար միջավայրը գեղարվեստի գրավչությամբ: Ստեղծիր երկիր-եզերքիդ գեղարվեստական դիմանկարն այնպես, որ այ-

ԳԻՐՍ ՄՆԱՑ ՀԻՇԱՍԱԿՈՂ

լազգին, գրածը ընթերցելով, երազի գեթ մեկ անգամ լինել այնտեղ, ինչպես բոլորս կուզենք Թումանյանի Լոռին: Ստեղծագործությունը լինի խղճի գրականություն: Թե՛ դու՛ հեղինակը, թե՛ ընթերցողը մեծ խղճահարությունը տոգորվեք կյանքի հարվածներից ստորացված մարդու նկատմամբ: Շատ ընթերցողներ են ինձ հավաստել, որ դա իմ գլխավոր արժանիքն է: Մարդու դրամատիկ կերպար՝ անգամ նրա կատակերգական վիճակում, ինչը պատճառում է հոգու ողջ խճանկարը: Եթե գրվածքում մարդը չի կերպարանում, մնում է շարժվող, խոսող մեկը, ոչինչ չներշնչող շրջապատին:

Կերպարը՝ չափավոր կոլորիտայնությամբ, ավելի՛ հոգեբանական: Չափից դուրս ազգային բնականացումը վնասում է նրա համամարդկային ընկալմանը: Լեզվական կատարելություն, հայերենը շնչի բարձր գեղարվեստականությամբ, ոչ հողվածային բառաբանով, բնաշխարհիկ կերպարի կենդանի խոսքով, հագեցած երկրի մտածությամբ ու մտահոգությամբ: Գիրը լինի հարուստ, շատ բան ասի, տողը՝ լիքը, բառը՝ իմաստուն: Լեզուն է արթնացնում ընթերցողի համակրանքն ու սերը: Իմ թեմայի ժամանակը 1950-60-ականներն էին, երբ խորհրդային գրական պարտադրումներն արդեն հետ էին մղվում, և նոր, բայց հին արժեքները՝ դանդաղ վերադառնում, մեզանում՝ Չարենցի ու Բակունցի ավանդները: Թեև մթնոլորտը դեռ խորհրդային, դեռ կաշկանդված գրաքննությամբ, չունեմ գեթ մեկ պատմվածք, որը գրված լինի պարտադրված թեմայով և պատկերմամբ: Զգալի շատ են մերօրյա իրականությունից հղացվածներ: Ոճական ձևախաղեր չեն արել, շարադրանքը գերծեմ պահել ընթերցողին իբր գրավիչ անհարկի, ասե՛ք՝ սեռական կրքային պատկերումներից: Զգտել են այն մտայնությամբ, որ գրական գործը դաստիարակող, բարության մղող արժեք է ի սկզբանե: Հպարտանում են, որ կերտել են հայ աշխատավոր գեղջուկ կանանց ազնվական կերպարների մի ամբողջ շարք: Մեծ սեր, խորունկ բարոյականություն: Բունիմի սմանատիպ շարքի կանայք ավելի կրքի մկրտվածներ են, ինչպես վայել է ռուս իրականությանը, թեկուզ՝ գեղջկական: Մեծ գրողը ավելի կնամեծար է, պաշտամունքի հասնող: Ռուս կինը ազատ է, չբռնադատված իր ողբերգականության մեջ էլ: Նրա վիպակ-պատմվածքներում առկա չէ խղճահարույց բնույթը, ինչը իմ սիրած մաներան է: Հրաշարում մաշված հանգուցալուծումներից, ինչպես դա նկատվել է «Լիտերատուրնայա գագետայում» լույս տեսած Ալլա Տեր-Հակոբյանի «Отклянение от нормы» հոդվածում: Կնչի թեկուզ անհամեստ մի նկատառումն էլ. գրողը պիտի լեզվառճական, բառագաղտածան, մտածության մթնոլորտ ստեղծի իր գրական միջավայրում: Կարծում են՝ այդպիսի տպավորություն թողել են գրող ու լրագրող ընկեր-ժամանակակիցներիս ստեղծագործական ձեռագրում: Ահա և հարցի գուցե ոչ սպառիչ պատասխանը:

- Անակնկալ չէ՞ր ընթերցողի, նաև թեզ համար պոեզիային դիմելը, այն էլ 70-ին մոտ

տարիքում: Բանաստեղծական երկու ժողովածուն բավարար են որպես բանաստեղծ էլ հիշատակվելու:

- Երկու դեպքում էլ՝ այո: Գրողի կյանքում լինում է մի շրջան, երբ նա օտարանում է իր ներշնչանքին ու ցած է դնում գրիչը: Շատ գրողներ են «հոգնել» չափածոյից ու դիմել արձակին կամ դրամատուրգիային և՛ հակառակը: Դա օգնում է վերադարձնել ստեղծագործական լիցքերը: Այո, ինձ համար անակնկալ էր չափածոյին դառնալը: Ներշնչեցին մանկության, պատանության օրրանում գտնվելս, հարագատ հանդերում լինելս, նյութապես գոյատևելու ջանքերս, երբ հող էի մշակում, կով պահում, խոտ հարում, բոստանը մշակում, և վերադառնում էին հուշերը, լցնում հոգին: Եվ հին կածաններում, ծոր ու բարձունքում այցելում էին թեզ բանաստեղծական տողեր, դարձիք տուն և գրի առ: Զարմանալիորեն «թեթև ու հեշտ» գրվեցին հարյուր վաթսուներեք բանաստեղծությունն ու հարյուր քառասունը: Այստեղ է, որ ապրված ասելիքն է ոգիացնում գրելու ցիդը: Երբ այլևս սպառված էր բանաստեղծելու կիրքը, զգացի, որ կարոտում են արձակին: Խոստովանում են՝ հետ-չափածոյական արձակս այն է, ինչին կուզեի հասնել: Դուրս էի եկել նոր թարմ ներշնչանք ու մտածողություն: Այդ պատմվածքներում է, որ ավելի կերպարի հոգեբանական է, քան չափից ավելի բնականացումը, ավելի ընկալելի այլազգի ընթերցողին էլ: Երկու ժողովածուն, այո, բավարար են հիշատակվելու որպես բանաստեղծ, եթե ընթերցողը դրանց վերջին էջը շրջելուց հետո ամփոփվում է ինքն իրենում և հետադարձ վերապրում այն հոգեպարար զգացումները, որ պատճառում են բանաստեղծական տողերը և եթե, իրոք, պատճառում են: Չեն վարանում ասելու, որ այդ տողերը չեն գիշում պատմվածքիս տողերին, կատարելությամբ կարող է գերազանցել, քանի որ իմաստավորելու, չափավորելու, հանգամայնելու, վանկավորելու դժվարություններում ավելի են մտասևեռվում գտնվելու ամենարտահայտիչ բառերը, որոնցով հարուստ է հայերենը, ուղղակի պիտի հասու լինես դրանց և դժվարանալիս չգրես պակաս արտահայտիչը, որ առաջ անցնես: Գտնում են, որ ստեղծել են հայ դասական ավանդներին համահունչ հոգեվերլուծական պոեզիա: Այն իմն է, չի հիշեցնում որևէ մեկին, ուղղակի խոսքի կատարելությամբ ձգտել են Տերյանին, հոգեվերլուծությամբ՝ Թումանյանին: Այն թիչ չէ: Եթե թիչը բարձունք է հանել Դուրյանին և Մեծարենցին, ուրեմն բավարար է տեղ գրավելու իրեն արժանի դարակում: Լավ է թիչ, բայց լավ: Մեծն Լոռեցու պատանեկան շրջանի շատ բանաստեղծություն ու պոեմ իր որակը չեն, բայց ճանապարհ են հարթել դեպի համաճարտություն, միևնույն է՝ ընթերցողի տեսադաշտից դուրս են դրանք: Ահա մեկ երկու նմուշ իմ «Ինքնագրույց» ժողովածուից.

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՍԼԱՑՔԸ-ԱՍՏՂԵՐԻ ԶԱՐՄԱՆՔԸ

Տիրոջ արքով, վարք ու կարգով Անցնում են ողջ տիեզերքով...

Աստեղային զարմանք չորս դին. «Ո՞վ է, ի՞նչ է անում թափառ, Մենավոր ու անկառավար... Նա է՛ հոգնած մի երկրային, Բայց նա ինչու՞ վարք ու կարգով, Այն էլ նույնիսկ տիրոջ արքով

Մեր անհուն է չափում քայլով, Ասես անհոգ, շուք ու փայլով... Բայց նա չէ՞ որ հոգնած ու հեզ, Հայացքը մեզ պարզած անելք, Ելք է փնտրում իր երկրից, Ինքն իրենից, ջրից, հրից, Իր բյուրավոր շնորհներից, Ծագող-մթնող իր օրերից... Ինքն իրենից ինչպե՞ս էլավ, Մեզ էլ շնորհ արեց, անցավ, Ու՞ր է սուրում անվերադարձ, Անպատասխան ու ոգեբաղձ... Կա՞ մեր ծիրում իրեն հայտնի, Մեզ դեռ անհայտ առեղծված մի...»

ԵՐԵՔ ՔԱՈՅԱԿ

• Ինձ մնաց վերջին մի հեզ ոտնատեղ, Տեսնեմ կարո՞ղ են այնպես ոտ դնեմ, Որ ոչ Տեր աստված ակնածի սրտեղ, Ոչ էլ հենց ինքս ինձնից բեկանվեմ:

• Թեպետ գալիս են հիմա շրջայցի, Գալիս անճանաչ, փնտրելով հասցե, Սակայն հետո են գալու ձեզ այցի՝ Մտնելու ձեր տուն արդեն անհասցե:

• Բացի երանի ուղեմիշ կանչից ամեն ինչ սուտ է, Երբ կռուկները թևում-իջնում են՝ գարնանամուտ է, Այս, մեր սրտե՞րը երբ են կանչելու՝ սեր է և գուրք է, Ամենուր արդար և անքուն խղճի բաց լուսամուտ է:

- Քո գրական հրապարակախոսությունը, որը կոչում ես երկրորդ ներշնչանք:

- Այն իմ երկրորդ հրապարականքն է արձակից ու պոեզիայից հետո: Գրել են ոչ քիչ հոդվածներ, որոնցում դառնում են այն ներքին ու նրբին ազդակներին, որոնք ստեղծագործությունը՝ պատմվածք թե բանաստեղծություն, հաղորդակցում են ընթերցողի սրտի պահանջին: Դրանք մոտավորապես այն են, ինչը մանրամասնեցի որպես պատմվածքներիս արտահայտիչներ. կատարյալը անհասանելի է, չափի զգացումը, կերպարը, տաղանդի դասերը, ինչը-ինչպեսը և այլն: Դրանք քննել են դասական ավանդների տեսանկյունից՝ միշտ հավատարիմ սկզբունքին, թե նորամուծությունը գրականության զարգացման շարժիչ է, եթե ժամանակ անց դասվելու է մեծ արժեքներին:

- **Չափապահ էլ ես:**
- Ոչ: Չէի ցանկանա անիմաստ գովերգվել, այլ՝ քննադատորեն վերլուծվել: Ուրիշ էր 1960-70-ականների գրաքննադատման մա-

կարդակը: Գրածը ընթերցում էին ոչ միայն մի քանի գրող ու լրագրող: Ունեցել են լավ ընթերցողների շրջանակ, լինում էին արձագանքներ՝ գրավոր ու բանավոր: Անտես չէր արվում պատմվածքը: Գրողական խմբերով ընթերցողների հետ հանդիպման էինք գնում հեռավոր գյուղեր, ու երբ անձանոթ մեկը հավանության խոսք էր ասում, զգում էիր, որ նա է անկեղծ գնահատողը: Խոսքս երևանյան շրջանիս մասին է: Ինչևէ, եթե գրականության ժամանակ չէ, ի՞նչ գնահատություն պիտի ակնկալես: Չկա գրական պատշաճ մթնոլորտ, որում ընդգրկված լինի ընթերցող ժողովուրդը: Ոչ ոք մեղավոր չէ. բուռն մթնոլորտ է առաջադրում տաղանդին ու այն անշահախնդիր գնահատողին: Կան չզննատվելու այլ պատճառներ: Իմ դեպքում դրանցից մեկը մշել է Հանլետ Մարտիրոսյանը. «Քեզ պահում են Հրանտ Մաթևոսյանի սովերում»: Շնորհակալություն նրան, Վարդան Հակոբյանին, ժամանա Բեզլարյանին, էլի մեկ-երկուսին, ովքեր անտես չեն թողնում գրածը:

Մի հողվածում հիշել են Մարոյանի խոսքը. «Ես գիտեմ շատ հրաշալի գրողների, ովքեր չգիտեմ ինչու գնահատված չեն»: Սրան «որպես պատասխան» հիշեմ Տիգրան Պետրոսյանի նկատմամբ: 1959-ին խորհրդային Միության շահմատի չեմպիոնը, Երևան գալով, հանդիպման էր պետական համալսարանում: Բազում հարցերից մեկին՝ ինչո՞ւ նույնիսկ գրոսմայստեր մոտիկ ընկերները՝ Գելլերը, Ավերբախը և այլք, չեն ուզում, որ չեմպիոն դառնաս, Պետրոսյանը՝ «Բոլորն այսպես են մտածում. եթե ես չեմ հաղթում Բոստֆինիկին, թող մնա ինքը»: Խեղճ սիրելի պատանի Մեծարենց, երևի տաղանդ է պատճառը եղել, որ գրական շրջապատը անտես է արել այն, ու դու ինքնադատման փորձ ես արել, արժանիորեն ու արժանապատվորեն գնահատել ինքդ թեզ: Եվ երկի քո օրինակին է հետևել թեզ պաշտող Չարենցը, ով նույն միջավայրից էլի խոռվյալ՝ հպարտորեն իրեն չկամեցողներին առերես գրավոր հավաստել է իր բարձրությունը նրանցից: Ինչ իմանաս՝ նույն ազնիվ գայրույթից մղված չի բարձրաձայնել Մարոյանը. «Իմ գրվածքները նորից ու նորից կհայտնաբերվեն»: Քի՞չ է ինքն էլ արժանացել բթամտության: Էլի շատերը...

Ոչինչ, ստեղծագործողին հավերժ ուղեկից երևույթ է, դու շարունակիր գրել մեկ լավ բանաստեղծություն ու մեկ լավ պատմվածք, և գրականությունը մեկ առաջընթաց քայլ կանի՝ քեզնից շնորհակալ:

- Գրողը պարտավոր է նոր բանաստեղծում...

- Այդպիսիք տասնյակներով կհաշվվեն՝ սկսած առաջնեկ «Տոհմական չից», որը դարձավ խորագիր գրքերիս՝ չհաշված բազում բառերի նորովի հնչեցումները նույնիսկ հոդվածներում:

- Վերջը, հետո՞...

- Միջումն ու մեղումն հետոյի մասին չեն մտածում: Դու գործը արա, պարտավոր ես անել: Հետոն՝ հետագային: Թե մի բան արել ես, կիմաստավորի այն:

ԳՈՐԱՑՈՒՑԻՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1 Դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ Արթուր Մաթևոսյանը ՆԶՊ առարկայից հանրապետական փուլում երկրորդ մրցանակի է արժանացել: Դպրոցի տնօրեն Նաիրա Խաչատրյանը, որի եղբոր անունով է կոչվում կրթօջախը, գոհ է իր աշակերտից և ՆԶՊ ուսուցիչ Ա. Հարությունյանից: Ն. Խաչատրյանի եղբայրը՝ Հակոբը, նույն դպրոցի շրջանավարտ է, որը մշտապես աչքի է ընկել ուսման առաջադիմությամբ օլիմպիադաներում, ինտելեկտուալ խաղերում: Հերոսաբար մարտիրոսվեց 2015թ. մարտի 19-ին «Եղնիկներ»-ում:



Ուռեկանի միջնակարգ դպրոցում սովորում է 43 աշակերտ: Տնօրեն Արմեն Հակոբյանը գոհ է իր սաներից. շատերն են լավ սովորում, շրջանավարտների հիմ-

նական մասը բուհեր են ընդունվում: Դպրոցում լավ է նաև ՆԶՊ առարկայի դրվածքը: Արդեն 12-րդ դասարանի աշակերտ Դավիթ Միքայելյանը 3 անգամ մասնակցել է ՆԶՊ առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլին: 9-րդ դասարանում արժանացել է երրորդ մրցանակի, 10-րդում՝ 1-ին, 11-րդում՝ 2-րդ: Որոշել է դպրոցն ավարտելուց հետո ընդունվել Շուշիի տեխնոլոգիական համալսարան:

Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչը տեղեկացրեց, որ շրջանից էլի աշակերտներ կան, որ ԱՀ հանրապետական փուլում գովասանագրերի և պատվոգրերի են արժանացել:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱԿ

ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ

ՀՐԱՇՈՒՆՉ ԶԻՆՎՈՐ՝ ԱՆԱՌԻԿ ՍԱՀՄԱՆ

Որ Արցախն իր մշակույթով, գիտությանը, ու կրթությանը, տնտեսական տարբեր ոլորտների ընդգրկմամբ, բանակային կյանքի կարգապահությամբ, մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում աշխարհի տարբեր ծայրերում, անժխտելի փաստ է: Ոչ խորհրդային երկար ու ծիգ տարիները, ոչ հարևան երկրի հպատակության տակ գտնվելը չեն կարողացել խեղել մեր ազգային գիտակցությունը, կոտրել մեր ամուր կամքը, հայրենասիրական մղումները, վճռական պահին միակամ ու միասնական փոթորկվելու ձգտումը՝ համուն ազատ ու անկախ Արցախի, խաղաղ ու ինքնիշխան ապրելու մեր իրավունքը: Այս հատկանիշները, որ յուրաքանչյուր ազգի պատվի ու փառքի անբեկանելի բաղադրիչներն են, մենք դարեր շարունակ կրել ենք մեր հոգում, պահել ու պաշտպանել ամեն տեսակի ոտնձգություններից, բռնությունից, մաքառելի հեծուկա մահի: Սա է մեր կենսակերպը. ապրել հպարտ ու եղածով բավարար՝ երբեք աչք չտնկելով ուրիշի ունեցվածքին: Սա կեցություն է, որ աշխարհի ոչ բոլոր ազգերին է բնորոշ:

Ահա այսպես՝ մեր ունեցածով զոհ ու երջանիկ, կյանքի ու մահու կռիվ ենք տալիս մեր ազատության ու անկախության համար այն հավատով, որ ինչ որ մերն է, պիտի լինի միայն մերը: Ամենամեծ ծեռքերումը, որ ունեցանք 20-րդ դարավերջին (Արցախյան հերոսամարտ), փաստում է, որ մեր հերոսական ժողովուրդը իր նախնիներից դարավոր ժառանգություն է ստացել մի հայրենիք, որում ապրելու իրավունքը մերն է ու զուտ մերը: Եվ այսօր մեր առաջնահերթ խնդիրը հայրենիքի համար աննկուն պաշտպաններ ունենալն է, որոնք ամեն վայրկյան պատրաստ են հայրենիքի գոհասեղանին դնել իրենց ունեցած ամենաթանկը՝ կյանքը, միայն թե անխռով լինի այդ հայրենիքը, ամուր լինեն նրա սահմանները: Մենք երբևէ պակաս չենք ունեցել հայրենասեր նվիրյալների՝ մեծ թե փոքր. հենց դրա մեջ է մեր անպարտելիությունը: Մի վառ ապացույց, որը դեռ շատ թարմ է բոլորիս հիշողության մեջ. Տավուշի դեպքերին արծազանքելով՝ հնգամյա փոքրիկը իր հեծանիվի անիվն է նվիրաբերել սահմանը պահող զինվորի կյանքն անվտանգ դարձնելու համար: Ու ի՞նչ: Չպաշտպանել՝ նման

փոքրիկների անհոգ մանկությունն ու վառ երազանքները, մայրերի ու քույրերի պատիվը, երկրի նյութական ու ոչ նյութական արժեքները:

Ահա այս ամենով է շնչում մեր մատաղ սերունդը, որը երբեք չի վարանում ճակատագրական պահերին:

Օրերս Ասկերանի շրջանի խնամապատի միջնակարգ դպրոց էր այցելել Հայաստանի հանրային հեռուստատեսության ռեժի-



սորների մի խումբ նկարահանության: Խմբի գլխավոր ռեժիսոր Էդուարդ Համբարձումյանը, ներկայացնելով նրանց, տեղեկացրեց, որ այցի նպատակն է բազմասերիանոց (16 սերիա) հեռուստաֆիլմ նկարահանել Արցախի մասին: Առաջարկը եղել է Հ1-ի նախկին տնօրեն Մարգարիտա Գրիգորյանի կողմից (ներկայիս տնօրենն է Արմեն Սարգսյանը): Ի միջի այլոց, ու Համբարձումյանը հայկական «Կյանք ու կռիվ» կինոնկարի երկրորդ ռեժիսորն է: Այսօրվա մասը, որ նկարահանվում է, կղչվելու է «Ռազմական Արցախ»: Ֆիլմը նվիրված է Արցախի բանակին, Իվանյանի անվան ռազմական ուսումնարանի առօրյային և ընդհանրապես մատաղ սերնդի՝ ռազմագիտությունից ունեցած հիմունքներին դրսևորմանն ու ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Դպրոցի զինղեկ Արման Ավանեսյանի՝ 2017թ. ցուցադրած մարտավարություն

էր հակառակորդի անսպասելի հարձակման դեպքում: Ստացվում է տեղեկություն, որ ոստիկան զինվորները ներթափանցման փորձ է արել: Լսվում է հրամանատարի խրոխտ հրամանը՝ զբաղեցնել դիրքերը: Ապագա մարտիկներն արագ ու անկաշկանդ զբաղեցնում են իրենց դիրքային հատվածները. իրենց չեն կորցնում, գործում են ճշգրիտ ու վճռական: Սկսվում է մարտը: Հակառակորդի զինվորներն իսկապես ամբողջովին վնասագերծված է, զինտեխնիկան՝ ոչնչացված: Մարտն ավարտվում է մեր զինվորների լիակատար հաղթանակով: Ջոկի հրամանատարը գեկուցում է. «Թշնամին ոչնչացված ու հետ է շարտված, կորուստներ չունենք, ունենք միայն մեկ թեթև վիրավոր»: Լսվում է հրամանատարի հիացական ու քաջալերող ձայնը. «Կեցցեք, տղաներ: Հայրենիքը բարձր կգնահատի ձեր հաղթանակը»: Ու կրկին զինվոր դիրքում է՝ միշտ զոհն ու արթուն, քանզի նեմզ ու խորամանկ է հակառակորդը:

Նկարահանող խումբը ծանոթանում է մարտավարության բոլոր մանրամասներին, դետալներին, զինվորի վճռական քայլերին, զենքի հետ վարվելու կանոններին, հաղթանակած մարտիկի հոգեկան ապրումներին, ապագա հայրենյաց պաշտպանի մտորումներին: Այստեղ՝ Արցախում, զինվոր են բոլորը՝ մեծից փոքր: Բոլորին մտահոգում է նույն խնդիրը՝ Արցախի խաղաղությունը: Եվ նրանք լավ են գիտակցում դրա զինը, բայց գործում են անվարան ու աներկբա: Սա ոչ միայն հայրենիքի, հայրենի հողի հարց է, այլև փառապանծ մի ժողովրդի պատվի խնդիր, որ վտանգի դեպքում մագնիսական ուժով միավորվում, ամուր կռուի է դառնում ու ելնում ընդդեմ ոստիկ: Արևմտյան պահին հայրենիքից թանկ ոչինչ չկա: Սովորողները լավ են սերտել մոդերնիստ խոսքերը, թե «Իրավունքը ուժի հասկացողությունն է, այլ ոչ տրամաբանական» կամ՝ «Հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ և կործանվում դրա պակասից»: Նրանք գիտակցում են, որ ազգի զավակը լինելուց գառ նաև նրա իրաշունչ զինվորը պիտի լինել:

Այսպես քայլ առ քայլ մեծանում է մի սերունդ, որը պատրաստ է կյանքի գնով հայրենիք պահել:

Նկարահանման օրն ու ժամանակը հանրակրթական էին Ակնայի (Աղղամ) ազա-

տագրման ու հայ-ադրբեջանական սահմանին՝ Տավուշում, հայ զինվորների փառապանծ հաղթանակների հետ, և երեխաները մեծ ներշնչանքով էին խոսում այդ դեպքերի մասին: Ջինղեկ Արման Ավանեսյանը պատմում էր գյուղի ազատամարտիկների հերոսական պաշտպանության, մարտական գործողությունների մասին, իսկ օրվա հերոս մարտիկները խոսում էին համացանցը ողողած հայ զինվորների սխրագործությունների մասին Տավուշի շրջանում:

Մեծանում ու դաստիարակվում է հայրենասիրական գաղափարներով օժտված և մի սերունդ, որը դառնալու է հայրենի եզերքի խիզախ պաշտպանը: Նրանց մեջ ժառանգաբար է իրենց նախնիներից փոխանցվել զենքը սիրելու, մարտավարության ու հայրենապաշտության արվեստը: Ջինղեկը շեշտում է, որ երեխաները լավ են հասկանում, որ շատ մոտ են հակառակորդին, սակայն իրենց հերոս հայրերի, պապերի, տատիկների պատմություններով ոգևորված՝ իրենց հոգուց կարողանում են վանել վախը: Ամեն տարի Մայիսյան եռատոնին նորացված ու քարամացված ծրագրով կազմակերպվող այսպիսի միջոցառումները (հանդիպումներ ազատամարտիկների հետ, այցելություններ մարտական դիրքեր և զոհված ազատամարտիկների հուշահամալիր, բանակի հետ ունեցած սերտ կապ) ավելի են բարձրացնում նրանց մարտական ոգին:

Նկարահանվեց նաև մի դաս-միջոցառում, որը նվիրված էր մարտավարության հիմունքներին, ինժեներական արգելափակոցներին (պայթուցիչ, ակամներ՝ հակատանկային և հակահետևակային, չպայթող՝ փշալարեր և այլն):

Ներկայանում մի առանձին հուզմունք պատճառեցին աղջիկների՝ խրամատում հաղթած զինվորի կողքին կանգնելն ու «Քոչարի» բռնելը, հաղթությունը միասին վայելելու բերկրանքը:

Նկարահանող խումբը անթաքույց հիացմունքով էր հետևում պատանիների՝ «մարտի դաշտում» հանդես բերած ռազմավարական հմտություններին:

Երեխաները գոհացրին խմբի անդամներին, մնում է՝ մենք էլ հավատով սպասենք, որ ֆիլմը կդառնա մեր վավատեսական սպասումների շղթան միավորող լուսն օղակը:

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԳՈՐԾԵԼԱՈՋ

Ժամանակակից աշխարհում ոչ ոք, ոչ մի երկիր ապահովագրված չէ տարաբնույթ աղետներից, սոցիալական ցնցումներից և մարտահրավերներից, իսկ նման իրավիճակներում առավել խոցելի է բնակչությունը:

Հայաստանի և Արցախի Հանրապետություններում առավել հանդիպող բնական ծագման երևույթներից ամենավտանգավորը երկրաշարժն է՝ իր ծավալով և հասցրած վնասների չափերով: Երկրաշարժի վտանգավորությունը չափազանց մեծ է, քանի որ առայժմ դրա առաջացման ստույգ կամխորշուն գոյություն չունի: Երկրաշարժերը եղել են, կան ու կլինեն: Երկրաշարժավտանգ գոտիներում, այդ թվում՝ Արցախի Հանրապետությունում բնակվող մարդիկ պետք է քաջ գիտակցեն և համակերպվեն այն մտքին, որ ցանկացած պահի կարող է տեղի ունենալ երկրաշարժ: Եվ ոչ մի քաղաքացի չի լքել դեռ իր երկիրը սոսկ այն պատճառով, որ պարուն է երկրաշարժավտանգ գոտում: Ուղղակի պետք է հաշտ ապրել բնության հետ:

ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» ՊՈԱԿ-ի («ՍՊԱՐԾ» ՊՈԱԿ) հիմնական գործառնություններից է բնակչության ամենատարբեր խավերի՝ սեյսմապաշտպանության վարքականոցների ուսուցանումը: Սակայն նոր կորոնավիրուսի համավարակով պայմանավորված Արցախի Հանրապետությունում ս.թ. մարտի 15-ից դադարեցվել է բոլոր ուսումնական հաստատությունների, նա-

խակթարանների, հիմնարկ-ծեռնարկությունների գործունեությունը, և հանրապետությունում հայտարարվել է արտակարգ իրավիճակ:

Արտակարգ իրավիճակ է հաստատվում որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, համաճարակի, զենքի կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակի դեպքում, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջության ու շրջակա միջավայրի զգալի վնասման և մարդկանց կենսագործունեության, բնական պայմանների խախտման:

Անկեղծ ասած, երբ մարդկությանը սպառնում է համաճարակը, այլ վտանգների մասին խոսելն այնքան էլ տեղին չէ: Սակայն տագնապի պահին, համավարակի պայմաններում մարդկությունը չպետք է մոռանա այլ վտանգների, մասնավոր բնական աղետների մասին: Հիշենք 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի աղետալի երկրաշարժը, որը ինչպես ամբողջ աշխարհին, այնպես էլ Ղարաբաղյան շարժմանը մի առ ժամանակ մոռացնել տվեց Արցախի և մնացած բոլոր այլ հիմնահարցերը: Անհրաժեշտ էր միավորել բոլոր ուժերը և ամեն ինչ անել կարճ ժամանակամիջոցում փլատակների տակ մնացած մարդկանց փրկելու և ավերածությունների հետքերը վերացնելու համար:

Հանրապետությունում ներկայումս ստեղծված արտակարգ իրավիճակը բոլորից պահանջում է արտակարգ գործելաժող ու գործակերպ:

Ծառայության բնակչության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատողներս հանրապետությունում հայտարար-



ված արտակարգ իրավիճակի պայմաններում, թեկուզ փոքրաթիվ լսարաններով, պահպանելով սոցիալական հեռավորությունը և պայմանները, շարունակում ենք սեյսմապաշտպանության վարքականոցների ուսուցում իրականացնել ԱՀ նախարարություններում, գերատեսչություններում, հիմնարկ-ծեռնարկություններում: Ուսուցումն իրականացնում ենք համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ՝

ցուցադրելով բնական աղետների և նրանցից պաշտպանվելու վարքականոցների վերաբերյալ տեսասահիկներ, տեսահոլովակներ: Այցելել ենք մոտ 30 հիմնարկ (ԱՀ Էկոնոմիկայի և արտարդյական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչություն, «Պետրոլ-Սերվիս» ՓԲԸ, «Արցախ անտառ» ՊՈԱԿ, «Ջերմային տնտեսություն» ՓԲԸ, «Արցախ կաթ» ՓԲԸ, «Սանմաքրում» ՀՈԱԿ, ԱՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, «Գնումների աջակցման կենտրոն», ԱՀ «Հաշվեքննիչ պալատ», «Արցախագազ» ՓԲԸ, Ասկերանի շրջվարչակազմ, Ասկերանի շրջմային բուժմիավորում և այլն)՝ ուսուցանելով և իրազեկելով աշխատակիցներին:

Ներկայումս կատարում ենք նոր նախագծերի կազմման, առկա և դիզակտիկ ուսուցողական նյութերի կատարելագործման ու թարմացման աշխատանքներ՝ արտակարգ իրավիճակը չեղարկելուց հետո ուսումնական հաստատություններում, նախակրթարաններում աշխատանքները շարունակելու համար:

Բնակչության իրազեկված և պատրաստված լինելը մեծապես նպաստում է սեյսմիկ ռիսկի նվազեցմանը, խուճապային, սթրեսային վիճակների կանխմանը:

Հայկանուշ ԵՍԱՅԱՆ
ՍՊԱՐԾ բնակչության հետ փարվող աշխատանքների բաժնի վարիչ

ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐ

ԱՇ ԸԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԸԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Մրցույթի մասնակիցների գիտելիքները և մասնագիտական կարողությունների ստուգումն անց է կացվելու երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2019թ. հ.22-24-ում, տեղադրված են նաև ԱՀ ԿԳՄ նախարարության edu.nkr.am կայքում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1. հանձնաժողովի անունով գրավոր

դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2. փաստաթուղթ (դիմում) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. անձնագրի պատճենը,

4. ինքնակենսագրություն (Ձև 4),

5. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջներին համապատասխան մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակությունները հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց

առկայության դեպքում),

6. մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7. Այլ պետությունների քաղաքացիների դեպքում՝ Արցախի Հանրապետությունում աշխատելու իրավունքը փաստող վկայագիր,

8. Արցախի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ,

ամեն օր՝ ժամը 09:00-15:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից, համապատասխան հանրակրթական ուսումնական հաստատությունում:

Փաստաթղթերի ընդունումը կկազմակերպվի ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի օգոստոսի 24-28-ն ընկած ժամանակահատվածում: Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան ուսումնական հաստատություն:

Կից ներկայացնում ենք նաև թափուր տեղերի ցուցակն՝ ըստ դպրոցների ու առարկաների:

1. Ստեփանակերտի հ. 1հ/դ

Ֆիզկուլտուրա- 24 դասաժամ
Շախմատ- 16 դասաժամ
Երաժշտություն- 7,5 դասաժամ

2. Ստեփանակերտի հ. 2հ/դ

Հայոց լեզու և գրականություն -17 դասաժամ
Ֆիզիկական կրթություն -0,5 հաստիք

3.Ստեփանակերտի հ. 3մ/դ

Հայոց լեզու և գրականություն -15 դասաժամ
Մաթեմատիկա -20 դասաժամ
Դասվար -13 դասաժամ

4. Ստեփանակերտի հ. 4հ/դ

Ֆիզիկա -6 դասաժամ

5. Ստեփանակերտի հ. 5հ/դ

Դաստիարակ -1 հաստիք
Քիմիա -6 դասաժամ

6. Ստեփանակերտի հ. 6հ/դ

Ինֆորմատիկա- 9 դասաժամ
Ֆիզկուլտուրա- 6 դասաժամ
Շախմատ- 8 դասաժամ

7. Ստեփանակերտի հ. 8մ-հ/դ

Պատմություն-10 դասաժամ
Քիմիա - 8 դասաժամ
Ֆիզկուլտուրա -12 դասաժամ
Ինֆորմատիկա - 6 դասաժամ
Երաժշտություն- 15 դասաժամ
Ռուսերեն - 22 դասաժամ
Անգլերեն- 18 դասաժամ

8. Ֆիզմաթ դպրոց

Մաթեմատիկա - 40 դասաժամ

Ասկերանի շրջան

- 1.Նախիջևանիկի մ/դ - Ֆիզիկա -13 դասաժամ, Մաթեմատիկա - 22 դասաժամ
- 2. Խանցքի հ/դ - Դասվար - 22 դասաժամ
- 3.Ծաղկաշատի մ/դ - Մաթեմատիկա - 20 դասաժամ, Քիմիա- 7 դասաժամ
- 4. Խնապատի մ/դ - Մաթեմատիկա - 28 դասաժամ
- 5.Ուղտասարի մ/դ - Անգլերեն- 16 դասաժամ, Ինֆորմատիկա- 6 դասաժամ, Մաթեմատիկա - 9 դասաժամ
- 6. Կարմիր գյուղի մ/դ - Դասվար - 20 դասաժամ
- 7. Խրամորթի մ/դ - Անգլերեն - 18 դասաժամ
- 8. Խրամորթի մ/դ Արմենակավանի և Փառուխի մասնաճյուղ դպրոցներ-Ռուսաց լեզու - 14/5+9/ դասաժամ, Անգլերեն- 8/4+4/ դասաժամ
- 9.Դահրավի հ/դ- Մաթեմատիկա - 12 դասաժամ, Անգլերեն 6- դասաժամ
- 10. Ավետարանոցի մ/դ - Դասվար - 16 դասաժամ

Մարտակերտի շրջան

- Մաղավուզի մ/դ - Մաթեմատիկա - 27, Ռուսաց լեզու - 6, Ինֆորմատիկա - 7, ՀեՊ - 7, Կենսաբանություն -12
- Պողոսագոմերի մ/դ - Ֆիզկուլտուրա - 13,5, Պատմություն- 11
- Վանքի մ/դ - Անգլերեն - 10, Գերմաներեն - 12, Մաթեմատիկա -15
- Կոճողտի մ/դ - ՀեՊ- 7
- Նոր Մարաղայի մ/դ- Աշխարհագրություն - 9
- Վերին Հոռաթաղի մ/դ -Հայոց լեզու գրականություն -12, Մաթեմատիկա -6, Ֆիզիկա -7

Մարտակերտի թ.1 մ/դ- Ինֆորմատիկա -12, Տեխնոլոգիա/տղաներ/ -10

Նոր Սեյտլանի մ/դ - Դասվար -19, Քիմիա - 9
Քոլտակի մ/դ- Մաթեմատիկա - 14, Ֆիզիկա - 7
Հաթերթի մ/դ- Երաժշտություն - 9,5

Չափարի մ/դ- Ռուսաց լեզու - 7, ՆԶՊ - 1 հաստիք
Գետավանի մ/դ- Ֆիզկուլտուրա - 21, Պատմություն - 7
Ծանկաթաղի մ/դ Վարդաձորի մ/ճ - Մաթեմատիկա -12
Ծանկաթաղի մ/դ- Ֆիզիկա - 9, Աշխարհագրություն - 7
Դրմբոնի մ/դ - Մաթեմատիկա - 8

Մեծ շենի մ/դ - Կենսաբանություն - 8, Քիմիա - 7
Կուսապատի մ/դ- Ռուսաց լեզու - 7, Ֆիզկուլտուրա -19,5
Առաջաձորի մ/դ - Անգլերեն - 20
Ն.Հոռաթաղի մ/դ- Ֆիզիկա -7, ՆԶՊ - 1 հաստիք
Չլդրանի մ/դ - Կենսաբանություն - 12

Թալիշի մ/դ- Դասվար - 20, Ռուսաց լեզու - 20, Աշխարհագրություն - 6, Պատմություն - 12, Ֆիզիկա - 7, Կենսաբանություն - 6, Ֆիզկուլտուրա - 15
Շահմասուրի հ/դ - Հայոց լեզու գրականություն - 6, Քիմիա, կենսաբ. - 8

Մատաղիսի մ/դ - Ֆիզիկա -7, Ֆիզկուլտուրա - 22,5, Աշխարհագրություն - 10, Ինֆորմատիկա - 7
Մատաղիսի մ/դ Տոնաշենի մասնաճյուղ- Դասվար - 20
Նոր Այգեստանի մ/դ-Մաթեմատիկա - 9, Ինֆորմատիկա - 6
Չարդախաչի հ/դ - Մաթեմատիկա - 15, Անգլերեն - 8, Քիմիա-կենսաբանություն -13

Կիչանի մ/դ - Քիմիա -11, Անգլերեն - 18
Աղաբեկավանցի հ/դ -ՆԶՊ - 0,5 հաստիք, Ֆիզկուլտուրա - 6
Մոխրաթաղի մ/դ -Ֆիզիկա - 9, ՆԶՊ - 1 հաստիք, Ֆիզկուլտուրա - 9, Անգլերեն - 6
Ն.Կարմիրավանի հ/դ - Մաթեմատիկա- 7, Ֆիզկուլտուրա- 9
Նոր Հայկաջուրի հ/դ - Դասվար - 14, Ֆիզկուլտուրա- 12
Գառնաքարի հ/դ - Ռուսաց լեզու- 6, Անգլերեն- 6, ՆԶՊ- 0,5 հաստիք

Մարտունու շրջան

- 1. Մարտունու հ. 1 մհ/դ - Ինֆորմատիկա -10 դասաժամ
- 2. Մարտունու հ. 2 հ/դ - Քիմիա - 8 դասաժամ
- 3. Խնուշինակի մ/դ - Պատմություն - 13 դասաժամ
- 4. Կաղարծու մ/դ -Ֆիզիկա -7 դասաժամ, Ֆիզկուլտուրա - 12
- 5. Կաղարծու մ/դ Պառավաթունի մասնաճյուղ- Դասվար - 14 դասաժամ
- 6. Կոլխոզաշենի մ/դ - Քիմիա 10 դասաժամ, Չինդեկ - 1 հաստիք
- 7. Կոլխոզաշենի մ/դ Սամայի մասնաճյուղ- Անգլերեն- 6 դասաժամ, Դասվար -12 դասաժամ
- 8. Հաղորտու մ/դ- Պատմություն- 12 դասաժամ
- 9. Նորշենի մ/դ- Ֆիզիկա- 15 դասաժամ, Անգլերեն- 6 դասաժամ
- 10. Շեխերի մ/դ- Ինֆորմատիկա -7 դասաժամ
- 11. Սարգսաշենի մ/դ- Աշխարհագրություն - 6 դասաժամ
- 12. Սոսի մ/դ- Քիմիա - 11 դասաժամ
- 13. Սպիտակաշենի մ/դ - Ինֆորմատիկա- 6 դասաժամ
- 14. Վազգենաշենի մ/դ - Աշխարհագրություն - 10 դասաժամ
- 15. Քերթի մ/դ - Մաթեմատիկա- 8 դասաժամ
- 16. Ճարտարի հ. 5 մ/դ - Ինֆորմատիկա -7 դասաժամ
- 17. Չիվանի մ/դ - Մաթեմատիկա - 19 դասաժամ, Ֆիզիկա- 7 դասաժամ, Աշխարհագրություն- 9 դասաժամ, Հայոց լ. և գրականություն- 7 դասաժամ
- 18.Ավդուռի հ/դ- Հայոց լ. և գրականություն -12 դասաժամ, Անգլերեն- 6 դասաժամ
- 19. Եմիշճանի հ/դ-Պատմություն-8 դասաժամ
- 20. Ճարտարի հ.3 հ/դ - Ֆիզկուլտուրա -15 դասաժամ
- 21.Ծովատեղի հ/դ - Հայոց լ. և գրականություն -12 դասաժամ, Ֆիզիկա - 6 դասաժամ

22. Մյուրիշենի հ/դ - Անգլերեն- 6 դասաժամ
23. Քերթի մ/դ - նախադպրոցական բաժին - Դաստիարակ- 1,12 հաստիք

Հաղորթի շրջան

- Հաղորթի մ/դ - Մաթեմատիկա- 17 դասաժամ, Ֆիզիկա- 12 դասաժամ, Ֆիզկուլտուրա -18 դասաժամ
Թաղասեռի մ/դ - Հայոց լեզու և գրականություն- 11 դասաժամ
Առաջամուղի մ/դ -Հայոց լեզու և գրականություն- 19 դասաժամ, Պատմություն- 20 դասաժամ, Դասվար- 20 դասաժամ, ՀեՊ- 6 դասաժամ, Քիմիա- 12 դասաժամ, Ինֆորմատիկա- 6 դասաժամ, Հասարակագիտություն- 6 դասաժամ
Տողի մ/դ - Հայոց լեզու և գրականություն- 20 դասաժամ
Ալնաղբյուրի մ/դ - Անգլերեն- 18 դասաժամ, Աշխարհագրություն - 9 դասաժամ
Ջրակուսի մ/դ - Քիմիա - 8 դասաժամ
Քյուրաթաղի մ/դ - Աշխարհագրություն - 12 դասաժամ
Տունու մ/դ - Քիմիա-10 դասաժամ, Անգլերեն - 9 դասաժամ, ՀեՊ- 7 դասաժամ, Մաթեմատիկա- 7 դասաժամ
Առաքելի մ/դ - Անգլերեն - 15 դասաժամ, Քիմիա - 6 դասաժամ
Դրախտիկի մ/դ - Ֆիզիկա - 10 դասաժամ
Ուխտաձորի մ/դ - Դասվար- 9 դասաժամ
Մոխրեռնի մ/դ - Անգլերեն- 6 դասաժամ
Մարիամաձորի մ/դ - Քիմիա, կենսաբանություն - 15 դասաժամ
Վարդաշատի հ/դ - Հայոց լեզու և գրականություն - 18 դասաժամ, Ֆիզիկա, Բնագիտություն - 8 դասաժամ, Չինդեկ - 1 հաստիք, Ֆիզկուլտուրա - 14 դասաժամ
Արևշատի հ/դ - Մաթեմատիկա - 22 դասաժամ, Ֆիզիկա - 10 դասաժամ
Բանաձորի հ/դ - Մաթեմատիկա- 25 դասաժամ, Ռուսաց լեզու- 18 դասաժամ, Անգլերեն- 12 դասաժամ, Քիմիա- 8 դասաժամ, Կենսաբանություն- 8 դասաժամ, Ֆիզկուլտուրա, Շախմատ- 19 դասաժամ
Խանձաձորի հ/դ - Աշխարհագրություն, բնագիտություն- 7 դասաժամ, Քիմիա, կենսաբանություն- 8 դասաժամ, Ռուսաց լեզու- 14 դասաժամ, Անգլերեն- 10 դասաժամ, Մաթեմատիկա- 12 դասաժամ
Հայկավանի հ/դ - Դասվար - 20 դասաժամ, Ֆիզիկա- 6 դասաժամ, Անգլերեն -10 դասաժամ, Քիմիա, կենսաբանություն- 12 դասաժամ, Ռուսաց լեզու- 17 դասաժամ

Շուշիի շրջան

- 1. Եղցահողի մ/դ - Քիմիա-կենսաբանություն - 8 դասաժամ, Պատմություն - 12 դասաժամ,
- 2. Մեծ շենի մ/դ- Քիմիա-կենսաբանություն - 7 դասաժամ, Անգլերեն - 8 դասաժամ
- 3. Հին շենի հ/դ - Չինդեկ - 0,5 հաստիք, Ֆիզկուլտուրա- 6 դասաժամ, Անգլերեն - 6 դասաժամ, Ռուսաց լեզու- 6 դասաժամ
- 4. Քարին տակի մ/դ -Շախմատ- 6 դասաժամ, Կենսաբանություն- 12 դասաժամ
- 5. Լիսազորի մ/դ- Քիմիա- 6 դասաժամ, Կենսաբանություն- 6 դասաժամ, Ֆիզկուլտուրա - 9 դասաժամ

Շահումյանի շրջան

- 1. Քարվաճառի մ/դ -Չինդեկ - 1 հաստիք
- 2. Ակնաբերդի մ/դ - Քիմիա - 11
- 3. Նոր Բրաջուրի մ/դ - Ֆիզիկա - 15, Քիմիա -11, Կենսաբ. - 12, Պատմություն- 19, Աշխարհագրություն - 10, Չինդեկ - 1 հաստիք
- 4. Նոր Գետաշենի մ/դ -Անգլերեն - 12, Ռուսաց լեզու- 19, Աշխարհագրություն - 7, Ֆիզկուլտուրա - 12, Չինդեկ -1 հաստիք

ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐ

- 5. Դադիվանքի մ/դ - Ռուսաց լեզու -11, Հայոց լեզու և գրակ. - 12
- 6. Եղեգնուտի մ/դ - Ֆիզիկա - 13, Անգլերեն - 14, Մաթեմատիկա - 6, Աշխարհագրություն - 8, Ֆիզկուլտուրա - 6, Զինդեկ - 1 հաստիք
- 7. Զուարի մ/դ - Մաթեմ., ֆիզիկա - 22, Քիմիա, կենսաբ. - 16, Ռուսաց լեզու - 12, Ֆրանսերեն - 10, Դասվար - 20, Պատմ., Աշխարհ. - 22
- 8. Նոր Էրթեջի մ/դ - Քիմիա, կենսաբ. - 20, Ֆիզիկա - 12, Հայոց լեզու և գրակ. - 6, Մաթեմատիկա - 6, Ֆիզկուլտուրա - 18
- 9. Նոր Խարխափուտի մ/դ - Մաթեմ., ինֆորմ. - 18, Ֆիզիկա - 6, Ֆիզկուլտուրա - 9, Ռուսաց լեզու - 11, Քիմիա, կենսաբ. - 8
- 10. Հավասթաղի հ/դ - Քիմիա, կենսաբ. - 15, Մաթեմատիկա - 19, Ֆիզիկա, Ինֆորմ. - 15, Ռուսաց լեզու - 14, Ֆիզկուլտուրա - 10, Աշխարհագրություն - 6, Ֆրանսերեն - 10, Զինդեկ - 0,5 հաստիք
- 11. Նոր Դարաչինարի մ/դ - Ռուսաց լեզու - 16, Մաթեմատիկա - 20, Ֆիզիկա, ինֆորմ. - 12, Պատմություն - 6
- 12. Նոր Մանաշիղի հ/դ - Ֆիզիկա - 10, Ռուսաց լեզու - 20, Պատմություն - 13, Աշխարհագրություն - 7, Մաթեմատիկա - 24
- 13. Չարեքտարի մ/դ - Մաթեմատիկա - 29, Աշխարհագրություն - 9, Ֆիզկուլտուրա - 20, Ֆիզիկա - 13, Ինֆորմատիկա - 6
- 14. Նոր Վերինդենի մ/դ - Ինֆորմատիկա - 7, Ֆիզկուլտուրա - 23, Զինդեկ - 1 հաստիք
- 15. Քնարավանի մ/դ - Դասվար - 21
- 16. Եղեգնուտի պետական մանկապարտեզ/դ - Դաստիարակ - 0,92 հաստիք

Քաշաթաղի շրջան

- 1. Արծվաշենի մ/դ - Դասվար - 2 հաստիք, Զինդեկ - 1 հաստիք, Հայոց լեզու և գրականություն - 12, Ռուսաց լեզու - 18, Օտար լեզու - 12, Պատմություն - 16, Ֆիզիկա - 8, Կենսաբանություն - 6, Քիմիա - 6, Աշխարհագրություն - 6
- 2. Տանձուտի հ/դ - Մաթեմատիկա - 16, Ռուսաց լեզու - 10, Օտար լեզու - 7, Զինդեկ - 0,5 հաստիք, Քիմիա - 6, Ֆիզկուլտուրա - 9
- 3. Վակունիսի հ/դ - Պատմություն - 16, Դասվար - 1 հաստիք, Ֆիզիկա - 8, Քիմիա - 6, Մաթեմատիկա - 15, Օտար լեզու - 10, Կենսաբանություն - 6
- 4. Սոնասարի մ/դ - Օտար լեզու - 9, Զինդեկ - 0,5 հաստիք, Մաթեմատիկա - 15, Ֆիզիկա - 7, Դասվար - 1 հաստիք, Պատմություն - 12, Կենսաբանություն - 6, Ֆիզկուլտուրա - 12
- 5. Մշենի մ/դ - Օտար լեզու - 8, Հայոց լեզու և գրականություն - 17, Ռուսաց լեզու - 10, Դասվար - 1 հաստիք, Պատմություն - 12
- 6. Աղավնոյի մ/դ - Զինդեկ - 1 հաստիք, Ֆիզկուլտուրա - 17, Հայոց լեզու և գրականություն - 12, Ֆիզիկա - 8
- 7. Քարեգահի մ/դ - Ֆիզիկա - 10, Ռուսաց լեզու - 20
- 8. Քարտանի մ/դ - Դասվար - 3 հաստիք, Ռուսաց լեզու - 19, Օտար լեզու - 12, Մաթեմատիկա - 20, Պատմություն - 14, Ֆիզիկա - 7, Կենսաբանություն - 11, Ֆիզկուլտուրա - 12, Շախմատ - 6
- 9. Ուռեկանի մ/դ - Քիմիա - 11, Կենսաբանություն - 12, Ինֆորմատիկա - 6, Ֆիզիկա - 12, Մաթեմատիկա - 25, Հայոց լեզու և գրականություն - 28
- 10. Տիգրանավանի մ/դ - Ռուսաց լեզու - 16, Օտար լեզու - 12, Մաթեմատիկա - 22, Աշխարհագրություն - 6, Ֆիզիկա - 9, Քիմիա - 7, Կենսաբանություն - 8, Ֆիզկուլտուրա - 15, Զինդեկ - 1

- հաստիք
- 11. Վանի մ/դ - Դասվար - 1 հաստիք, Հայոց լեզու, գրականություն - 19, Մաթեմատիկա - 24, Օտար լեզու - 14, Պատմություն - 16, Կենսաբանություն - 8, Քիմիա - 7, Ռուսաց լեզու - 20, Ֆիզկուլտուրա - 14, Աշխարհագրություն - 7
- 12. Բերձորի հ. 2 մ/դ - Մաթեմատիկա - 40, Օտար լեզու - 20, Ֆիզկուլտուրա - 14, Աշխարհագրություն - 7
- 13. Քաշունիքի հ/դ - Ռուսաց լեզու - 12, Օտար լեզու - 9, Հայոց լեզու և գրականություն - 15, Կենսաբանություն - 6, Զինդեկ - 0,5 հաստիք, Ֆիզկուլտուրա - 10
- 14. Արտաշավի մ/դ - Պատմություն - 21, Դասվար - 1 հաստիք
- 15. Վարդուտի մ/դ - Ռուսաց լեզու - 10, Օտար լեզու - 8, Հայոց լեզու և գրականություն - 14, Կենսաբանություն - 6, Ֆիզկուլտուրա - 12, Քիմիա - 6
- 16. Գողթանի մ/դ - Դասվար - 1 հաստիք, Կենսաբանություն - 6, Քիմիա - 6, Ֆիզիկա - 8, Աշխարհագրություն - 8, Ֆիզկուլտուրա - 12, Մաթեմատիկա - 7
- 17. Ղազարապատի մ/դ - Դասվար - 2 հաստիք, Ռուսաց լեզու - 16, Անգլերեն - 10, Մաթեմատիկա - 12, Ֆիզիկա - 9, Քիմիա - 6, Կենսաբանություն - 6, Պատմություն - 16, Աշխարհագրություն - 6
- 18. Մոշաթաղի մ/դ - Քիմիա - 11, Ֆիզիկա - 6
- 19. Գանձայի մ/դ - Մաթեմատիկա - 10, Ռուսաց լեզու - 8, Դասվար - 1 հաստիք, Զինդեկ - 0,5 հաստիք, Ֆիզկուլտուրա - 6
- 20. Սարատակի մ/դ - Զինդեկ - 1 հաստիք, Ֆիզկուլտուրա - 12
- 21. Սարտունաշենի մ/դ - Ռուսաց լեզու - 19, Օտար լեզու - 12, Աշխարհագրություն - 8, Պատմություն - 22, Քիմիա - 6, Կենսաբանություն - 6, Դասվար - 2 հաստիք
- 22. Զերիկի հ/դ - Դասվար - 2 հաստիք, Օտար լեզու - 9, Ֆիզիկա - 8, Կենսաբանություն - 6, Զինդեկ - 0,5 հաստիք, Ֆիզկուլտուրա - 9, Ռուսաց լեզու - 13, Պատմություն - 8
- 23. Կերենի մ/դ - Դասվար - 1 հաստիք, Պատմություն - 11, Զինդեկ - 0,5 հաստիք, Ֆիզկուլտուրա - 9
- 24. Դրախտաձորի հ/դ - Ֆիզկուլտուրա - 9, Զինդեկ - 0,5 հաստիք, Հայոց լեզու, գրականություն - 18, Մաթեմատիկա - 23, Կենսաբանություն - 6, Ռուսաց լեզու - 11
- 25. Գետամեջի մ/դ - Մաթեմատիկա - 15, Օտար լեզու - 10
- 26. Բերձորի հ. 1 մ/դ - Մաթեմատիկա - 13, Ֆիզիկա - 7, Պատմություն - 19, Հասարակագիտություն - 8
- 27. Հայկազյանի մ/դ - Դասվար - 2 հաստիք, Հայոց լեզու և գրականություն - 22, Ռուսաց լեզու - 6, Օտար լեզու - 20, Աշխարհագրություն - 10, Ինֆորմատիկա - 7, Ֆիզիկա - 15, Կենսաբանություն - 12
- 28. Կովսականի մ/դ - Հասարակագիտություն - 8, Ֆիզկուլտուրա - 23, ՀեՊ - 7, Ինֆորմատիկա - 7, Ֆիզիկա - 15, Մաթեմատիկա - 14
- 29. Մուշի մ/դ - Հայոց լեզու և գրականություն - 7, Ռուսաց լեզու - 11, Օտար լեզու - 14, Աշխարհագրություն - 7, Պատմություն - 17, Քիմիա - 8, Ֆիզիկա - 9, Կենսաբանություն - 8, Զինդեկ - 1 հաստիք, Ֆիզկուլտուրա - 15
- 30. Ներքին Սուսի մ/դ - Մաթեմատիկա - 28, Ֆիզիկա - 13, Քիմիա - 9, Կենսաբանություն - 10, Աշխարհագրություն - 11, Ինֆորմատիկա - 6, Հասարակագիտություն - 6, Օտար լեզու - 14
- 31. Ծաղկաբերդի մ/դ - Անգլերեն - 8, Մաթեմատիկա - 14, Աշխարհագրություն - 7, Ֆիզիկա - 10, Պատմություն - 22, Մայրենի - 10, Ֆիզկուլտուրա - 18
- 33. Արվականի հ/դ - Օտար լեզու - 7, Հայոց լեզու և գրականություն - 21, Պատմություն - 13, Ռուսաց լեզու - 12, Ֆիզկուլտուրա - 9
- 33. Բազմատուսի մ/դ - Դասվար - 2 հաստիք, Մաթեմատիկա - 7, Պատմություն - 7
- 34. Աղածորի մ/դ - Հայոց լեզու և գրականություն - 11, Ռուսաց լեզու - 9, Մաթեմատիկա - 10, Դասվար - 1 հաստիք
- 35. Միրիկի մ/դ - Դասվար - 2 հաստիք, Հայոց լեզու և գրականություն - 7, Ռուսաց լեզու - 11, Օտար լեզու - 12, Ֆիզկուլտուրա - 12
- 36. Շալուայի մ/դ - Դասվար - 1 հաստիք, Ռուսաց լեզու - 10, Անգլերեն - 6, Ֆիզկուլտուրա - 6, Զինդեկ - 0,5 հաստիք
- 37. Մովսեսաշենի հ/դ - Հայոց լեզու և գրակ. - 7
- 38. Վուրգավանի մ/դ - Զինդեկ - 0,5 հաստիք, Պատմություն - 18, Ռուսաց լեզու - 15, Օտար լեզու - 10, Մաթեմատիկա - 15, Դասվար - 1 հաստիք, Ֆիզիկա - 8, Ֆիզկուլտուրա - 12
- 39. Աղանուսի մ/դ - Մաթեմատիկա - 11, Զինդեկ - 0,5 հաստիք, Օտար լեզու - 6
- 40. Իշխանաձորի մ/դ - Անգլերեն - 20, Հայոց լեզու և գրականություն - 21, Զինդեկ - 1 հաստիք, Պատմություն - 21, Ռուսաց լեզու - 20, Մաթեմատիկա - 22
- 41. Միջնավանի մ/դ - Հասարակագիտություն - 8, Հայոց լեզու և գրականություն - 20, Ռուսաց լեզու - 12, Ֆիզկուլտուրա - 21, Զինդեկ - 1 հաստիք, Ինֆորմատիկա - 7, Դասվար - 3 հաստիք
- 42. Հակի հ/դ - Դասվար - 3 հաստիք, Մաթեմատիկա - 15, Ֆիզկուլտուրա - 9, Ռուսաց լեզու - 13, Օտար լեզու - 10, Զինդեկ - 1 հաստիք
- 43. Դիցմայրի մ/դ - Մաթեմատիկա - 10, Զինդեկ - 0,5 հաստիք
- 44. Փակահանի մ/դ - Մաթեմատիկա - 29, Ռուսաց լեզու - 22, Ֆիզկուլտուրա - 15, Պատմություն - 9, Անգլերեն - 14
- 45. Այգեհովիտի մ/դ - Մաթեմատիկա - 30, Քիմիա - 7, Կենսաբանություն - 8, Աշխարհագրություն - 8, Ֆիզիկա - 9, Օտար լեզու - 12, Պատմություն - 18
- 46. Երիցվանքի մ/դ - Դասվար - 3 հաստիք, Հայոց լեզու և գրականություն - 17, Մաթեմատիկա - 15, Աշխարհագրություն - 8, Քիմիա - 7, Ֆիզկուլտուրա - 18, Շախմատ - 6
- 47. Հակարի մ/դ - Մաթեմատիկա - 14, ՆՁՊ - 0,5 հաստիք, Պատմություն - 11, Ռուսաց լեզու - 10, Հայոց լեզու և գրակ. - 18
- 48. Աղավնատան մ/դ - Դասվար - 2 հաստիք, Ռուսաց լեզու - 20, Օտար լեզու - 11, Պատմություն - 12, Կենսաբանություն - 6, Քիմիա - 6, Ֆիզկուլտուրա - 14, Զինդեկ - 1 հաստիք
- 49. Հոջանցի հ/դ - Զինդեկ - 0,5 հաստիք, Հայոց լեզու և գրականություն - 10, Մաթեմատիկա - 10, Դասվար - 1 հաստիք
- 50. Վաղազինի մ/դ - Հայոց լեզու և գրականություն - 10, Զինդեկ - 0,5 հաստիք
- 51. Լեռնահովիտի մ/դ - Զինդեկ - 0,5 հաստիք, Ռուսաց լեզու - 10, Օտար լեզու - 8
- 52. Ծոբաձորի հ/դ - Դասվար - 1 հաստիք, Հայոց լեզու և գրականություն - 10, Մաթեմատիկա - 10, Զինդեկ - 0,5 դրույք
- 53. Կովսականի պետական մանկապարտեզ - Դաստիարակ - 1,84 դրույք
- 54. Բերձորի պետական մանկապարտեզ - Դաստիարակ - 4,5 դրույք
- 55. Մոշաթաղի պետական մանկապարտեզ - Դաստիարակ - 0,72 դրույք

Գնահատանք

ԲԱՐԻ ՀԱՄԲԱՎՆ ՈՒ ԱՆԲԱՍԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՉԻ ԿԵՐՊԱՐԻ ԴՐՈՇՄ ՈՒ ՎԱՅԱԳԻՐ



րաբերմունք, համբերություն, նրբանկատություն ու պահանջկոտություն դիմացինի, նվիրում՝ իր պատասխանատու գործի հանդեպ, կերպարն առավել քան ամբողջական է դառնում: Այդ կերպարը երկար տարիներ եղել է Արցախի պետական համալսարանի Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնի զարդն ու ղեկավարը:

Էվելինա Բարսեղյան: Ծնվել է 1955թ. նոյեմբերի 7-ին Ասկերանում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, ավարտելով՝ 1975թ. ընդունվել է Սամարղանդի պետական համալսարան, այնուհետև 1978-ին տեղափոխվել Ուրալի պետական կառույց:

Մանկավարժական գործունեություն սկսել է ծավալել 1981

թվականից՝ ընդգրկվելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում:

Մասնագիտությամբ կենսաբան ղեկավարը յուրաքանչյուր դիմորդի հաջողությամբ ու հաղթանակով պատրաստակամ ու շահագրգիռ լինելուց զատ նաև բարի կամեցող է ճիշտ ուղղորդող ուսուցիչ էր:

Էվելինա Բարսեղյանը արհմիութենական կազմակերպության անդամ էր և ակտիվորեն մասնակցում էր նրա կազմակերպչական աշխատանքներին: Կանգնած լինելով ԱրՊՀ ասպիրանտուրայի և մագիստրատուրայի բաժնի հիմնադրման ակունքներում՝ երկար տարիներ ղեկավարել է այն հոգու թրթռով: Հոգուն անթեղած սերն ու

քաղցր թախիծը՝ նա այսօր այսպես է արտահայտվում. «Եթե ուզում եք իմանալ, թե ինչ եմ ես զգում, կասեմ՝ սիրված լինել: Ավելին պետք չէ: Տիտղոսներն այնքան էլ կարևոր չեն անձի արժևորման համար»:

Խորհրդանշական էր սիրված ղեկավարին, գործընկերոջը վաստակած հանգստյա անբասիր և արդյունավետ գործունեության համար ԱրՊՀ ղեկավար Արմեն Սարգսյանի կողմից Էվելինա Բարսեղյանը պարգևատրվեց շնորհակալագրով և նվերներով:

Այնուամենայնիվ, նրա ջիղն ու ավյունը չեն հատնում, ավելին, նա այսօր էլ ի գործն է մագիստրանտների, ասպիրանտների և

հայցորդների մի ողջ «բանակ» ղեկավարել:

Հարգարժան տիկին Էվելինա, խոնարհում՝ Ձեր ավանդի, աշխատանքի և բարի խորհուրդների համար, որոնք ավագի իմաստնությամբ փոխանցել եք բոլորին: Ձեր նվիրումը, վաստակը յուրօրինակ գին ունեցավ մայր բուհի, ներբուհական կոլոքիտի և ուսումնաստնչ սաների համար: Ձեր առաքելությունն իրականացված ու արդարացված է այնքանով, որ այսօր էլ բարի համբավն ու անբասիր գործունեությունը դարձան Ձեր անվան դրոշմն ու վկայագիրը:

Անահիտ ՀԱՎՈՐՅԱՆ ԱրՊՀ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐՅԱՆՈՒՄ ԲՈՆՃՔԱՄԱՐՏՆ ԱՄՈՒՐ ՀԻՄՔԵՐԻ ՎՐԱ Է

Բռնցքամարտը կոնտակտային սպորտի տեսակ է, որտեղ մարզիկները հատուկ ձեռնոցներ հագած՝ բռնցքներով միմյանց հասցնում են հարվածներ: Մարտը կարող է տևել 12 ռաունդ, իսկ ռինգում տեղի ունեցող գործողությունները վերահսկում է ռեֆերին: Հաղթանակը տրվում է այն մարզիկին, որի մրցակիցն ընկած է եւ չի կարողանում բարձրանալ տասը վայրկյանի ընթացքում (նոկաուտ) կամ եթե նա վնասվածք է ստացել, որը թույլ չի տալիս շարունակել մարտը (տեխնիկական նոկաուտ): Եթե սահմանված քանակի ռաունդներից հետո մարտը չի դադարել, հաղթողը որոշվում է դատավորների տված միավորներով:

Ժամանակակից բռնցքամարտը ծագել է Անգլիայում 18-րդ դարի սկզբին, իսկ 1920-ից սկսած՝ մտել է սպորտի օլիմպիական ձևերի ցուցակի մեջ: Որոշ երկրներում կան բռնցքամարտի ենթատեսակներ՝ ֆրանսիական բռնցքամարտ (սավատե), թայլանդական բռնցքամարտ (մուայթայ):

Այսօր ամբողջ աշխարհում հայտնի բռնցքամարտը, որպես մարզածես, գրավում է ավելի ու ավելի երկրապագուներին:

Արդեն երրորդ տարին անընդմեջ հուլիսի 22-ը նշվում է Բռնցքամարտի միջազգային օր: Օրվա առթիվ անդրադարձանք Արցախի բռնցքամարտի ֆեդերացիայի գործունեությանն ու տեղեկացանք հետագա ծրագրերի մասին:

Արցախում բռնցքամարտը սիրված ու մասսայականացված մարզածես է: Դրա վառ ապացույցն են Արցախի բռնցքամարտի ֆեդերացիայում մարզվող շուրջ 370 բռնցքամարտիկները: Բռնցքամարտն Արցախի առաջատար մարզածեսներից է, որը գործող խմբակներ ունի Արցախի տարբեր բնակավայրերում: Բռնցքամարտի խմբակներ կան Ստեփանակերտում, Շուշիում, Մարտակերտում, Հադրութում, ճարտարում, Կարմիր շուկայում, Շեխերում: Ֆեդերացիայի մարզիչ Գեորգ Թորոսյանի խոսքով՝ սեպտեմբերից նորաբաց խմբակներ կունենան նաեւ Բերձոր քաղաքում եւ Ներքին Հռոմաթալ գյուղում:

Արցախի բռնցքամարտիկները մասնակցում են տարբեր մրցաշարերի, եւ նրանց հաջողվում է մրցանակային տեղեր զբաղեցնել: Արցախը ներկայացնող առաջատար մարզիկներից են 2004թ. ծնված Մանվել Պետրոսյանը եւ Աշոտ Բեգլարյանը, 2005թ. ծնված Սանասար Իշխանյանը, Տարոն Սարգսյանը, Գոռ Բեգլարյանը, 2006թ. ծնված Արթուր Սարգսյանը եւ Արամ Ավագյանը, 2007թ. ծնված Գագիկ Թորոսյանը եւ Դավիթ Առստանյանը: Բացի նշված անուններից կան ուրիշ բռնցքամարտիկներ, որոնք ջանասիրաբար մարզվում են եւ խոստումնալից են նոր ձեռքբերումների հասնելու համար: Ինչպես նշում է մարզիչ Գեորգ Թորոսյանը, նորանոր նվաճումներն անխուսափելի են:

Բռնցքամարտը սիրված է ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների կողմից: Դա փաստվում է խմբակների



մարզումներին տարբեր տարիքի 7 աղջիկների մասնակցությամբ:

Արցախի բռնցքամարտի ֆեդերացիան 2018-2020թթ. ընթացքում մասնակցել է 33-ում կայացած բռնցքամարտի 12 առաջնության՝ գրավելով մրցանակային տեղեր, այդ թվում՝ 27 առաջին, 35՝ երկրորդ, 9՝ երրորդ տեղեր: Ֆեդերացիայի սաները մասնակցել են 4 միջազգային առաջնության՝ գրավելով 8 մրցանակային տեղ, այդ թվում՝ 5 առաջին 1՝ երկրորդ, 6՝ երրորդ տեղ:

ԱԲՖ-ի նախաձեռնությամբ իրականացվել է գույքային ծրագիր: 2019թ. բռնցքամարտի գործող խմբերը համարվել են անհրաժեշտ մասնագիտացված մարզագույքով: Արցախի բռնցքամարտի ֆեդերացիան պատերազմի հրամանատարներ Լեոնիդ Ազգալոյանի եւ Վլադիմիր Բալայանի, «Արայիկ» ինքնապաշտպանական հատուկ ջոկատի, սպորտի վարպետ եւ ազատամարտիկ Գեղամ Բարեյանի հիշատակներին նվիրված հուշամրցաշարերը: Կազմակերպելով այսպիսի մրցաշարեր՝ ֆեդերացիան նպատակ է հետապնդում մարզիկներին տրամադրել նոր ասպարեզ, արժեւորել հերոսների անցած կյանքի ուղին, գալիք սերնդի մեջ սերմանել հայրենասիրություն, դարձնել ուժեղ ոչ միայն մարմնով, այլեւ՝ ոգով, պատրաստ՝ հարկ եղած դեպքում պաշտպանել հայրենիքը:

Ֆեդերացիայի առաջիկա տարիների գործունեությանն ծրագրող ներառում է Արցախում բռնցքամարտի զարգացման շարունակական ընթացքի ապահովում, առկա խնդիրների որակյալ եւ համակարգային լուծում, Արցախի բոլոր շրջաններում բռնցքամարտի մասսայականացում, մեր հերոսների հիշատակին նվիրված հուշամրցաշարերի կազմակերպում, միջազգային մրցաշարերին եւ ուսումնամարզական հավաքներին մեր բռնցքամարտիկներին մասնակցելու հնարավորության ընձեռում, մարզիչների աշխատանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովում:

Այսպիսով, բռնցքամարտն Արցախում ամուր հիմքերի վրա է ու զարգացման հերթական փուլ է անցնում: Ընդհանրապես մեր բռնցքամարտիկներին ու նրանց մարզիչներին միջազգային օրվա առթիվ, ցանկանում մարզական վերելքներ:

Այսպիսով, բռնցքամարտն Արցախում ամուր հիմքերի վրա է ու զարգացման հերթական փուլ է անցնում: Ընդհանրապես մեր բռնցքամարտիկներին ու նրանց մարզիչներին միջազգային օրվա առթիվ, ցանկանում մարզական վերելքներ:

Այսպիսով, բռնցքամարտն Արցախում ամուր հիմքերի վրա է ու զարգացման հերթական փուլ է անցնում: Ընդհանրապես մեր բռնցքամարտիկներին ու նրանց մարզիչներին միջազգային օրվա առթիվ, ցանկանում մարզական վերելքներ:

ԷԼԻՆԱ ՆԱԶԱՐՅԱՆԸ ՀՈԶԱԿՎԵԼ Է ՀՀ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՉԵՄՊԻՈՆ



Ուրախությամբ հայտնում ենք, որ համավարակի պատճառով դադար տալուց հետո վերջապես մրցահարթակ են վերադարձել ծանրամարտիկները: Հուլիսի 22-30-ը Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի մարզադահլիճում 15-16 տարեկան պատանիների եւ աղջիկների միջեւ ընթացող ծանրամարտի առաջնությանը մասնակցել է Արցախի ծանրամարտի ասոցիացիայի սան Էլինա Նազարյանը եւ 15-16 տարեկան աղջիկների միջեւ հռչակվել 2020թ. ՀՀ առաջնության փոխչեմպիոն: Այս առաջնությունն առանձնահատուկ նշանակություն ունի ծանրամարտի ասոցիացիայի համար: Նախ՝ այն պատճառով, որ համավարակի շրջանում մեր համերկրացի ծանրամարտիկը կարողացավ մասնակցել առաջնությանը, իսկ ամենալավվորը՝ պատանեկան առաջնությունում Արցախը ներկայացնող մարզիկ Էլինա Նազարյանն առաջին անգամ բարձր ցուցանիշ արժանագրեց արցախյան ծանրամարտի պատմության մեջ:

Արցախի ծանրամարտի ասոցիացիայի նախագահ Արթուր Շիրինյանի հաղորդմամբ՝ Արթուր Նահապետյանի սան Էլինա Նազարյանն այս ստուգատեսի միակ մասնակիցն էր Արցախից: Հուլիսի 23-ին տասնհինգամյա ստեփանակերտցի ծանրորդուհին պայքարեց 71 կգ քաշային կարգում եւ երկամարտի 110 կգ ցուցանիշով արժանացավ արծաթե մեդալի՝ ոսկին զիջելով Գյումրին ներկայացնող ծանրորդուհուն:

Էլինա Նազարյանը շնորհավորանքի եւ քաջալերանքի խոսքեր ստացավ առաջնությանը ներկա գտնվող Եվրոպայի չեմպիոն, 2016թ. Օլիմպիական խաղերում 5-րդ տեղը գրաված Նազիկ Ավդալյանից, գյումրեցի ծանաչված ծանրորդուհի Աննա Գովելյանից, մարզիչ Արթուր Նահապետյանից, որի տրամաբանական շարունակությունը եղավ համատեղ լուսանկարը:

Նշենք, որ ծանրամարտի 2020թ. Եվրոպայի պատանեկան առաջնությունը նախատեսված է օգոստոսի 19-20-ը Լատվիայի Վենտսպիլս քաղաքում:

Բարձր նվաճմամբ վերադարձած մեր ծանրորդուհուն հանդիսավոր դիմավորել են Ստեփանակերտում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԲԱՐՈՒ ԵՎ ԳԵՂԵՑԻԿԻ ՍԵՐՄԱՆԱՑԱՆԸ



Հուլիսի 4-ին ծանր հիվանդության պատճառով կյանքից հեռացավ լավագույն անձնավորություններից մեկը՝ Մարտունու շրջանի Քերթ համայնքի նախկին վաստակաշատ ակումբավար Գեղեցիկ Հովհաննիսյանը: Նրա անժամանակ մահը ցավ թողեց ճանաչողների սրտերում:

Գեղեցիկ Շահենի Ազիզյանը ծնվել է 1954թ. նոյեմբերի 9-ին ճարտարում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1971թ. ուսումը շարունակել է Գորիսի մանկավարժական ուսումնարանում: Այն ավարտելուց հետո աշխատանքի է

անցել սկզբում Քարահունջ գյուղում՝ որպես մանկապարտեզի վարիչ, ապա Քերթում՝ որպես մանկապարտեզի դաստիարակչուհի: 1985թ.-ից մինչև 2017թ. հունվարի 1-ը աշխատել է որպես Քերթ համայնքի ակումբի վարիչ:

Իր գործունեության ընթացքում Գեղեցիկ Հովհաննիսյանը միշտ նախաձեռնող էր, ստեղծագործական մտահղացումներով լի, հասկանում էր արվեստը և հոգու ամուր թելերով կապված էր նրան: Հրաշալի տիրապետում էր երգարվեստին: Նա ակտիվորեն մասնակցել է ինչպես շրջանում, այնպես էլ հանրապետությունում կազմակերպվող տարաբնույթ մշակութային միջոցառումներին և Այայի մայրական օրհնանքը հղել հայ ժողովրդին: Նա իր շուրջը սեր էր սփռում, դրանով վարակում բոլորին. այս կարծիքին են բոլոր նրանք, ովքեր երբևէ շփվել են նրա հետ:

2014թ. հոկտեմբերին մասնակցել է Ստեփանակերտում կազմակերպված Բերքի տոնին և նույն ձևաչափով ՀՀ-ում կայացած՝ Աշխատավորի օրվան նվիրված ցուցահանդեսին:

Իր հայրենամեծեր աշխատանքի համար պարգևատրվել է ԼՂՀ մշակութային նախարարության և Մարտունու շրջվարչակազմի պատվոգրերով:

Գ. Հովհաննիսյանը բնատուր տաղանդավոր կին էր, մշակույթը խտացված էր նրա արյան մեջ: Նա ավելի քան 45 տարվա աշխատանքային ստատուսով, որից վերջին 10 տարին համատեղ ենք աշխատել: Մասնակցելով շրջանային և հանրապետական բոլոր մրցույթներին՝ նա միշտ առաջատարի դիրքում էր:

Ինքնամոռաց նվիրված էր աշխատանքին, յուրահատուկ մոտեցում ուներ, երեխաները նրան շատ էին սիրում: Իր հրաշալի ծայնային տվյալները նա փոխանցեց երեխաներին: Չգտնում էր ոչ մշակութային ժառանգությունը փոխանցել իր ստեղծած ինքնագործ խմբի սաներին: Մարմնավորելով դրաբարյան Այայի կերպարը՝ երկու տարի շարունակ մասնակցել է Երևանում կայացած ArmPro EXPO-2015 և EXPO-2016 մրցույթներին:

«Նա գերազանց իլիկ ու ճախարակ էր մասնում, արկանք պտտում, խնոցի հարում: Մենապատրաստում էր հանդես է եկել «Մշակութային խաչմերուկ» մրցույթ-փառատոնին շրջանում և հանրապետությունում: Կենսուրախ էր ու լավատես, կյանքը եռում էր նրա մեջ»,- մեզ հետ ունեցած զրույցում ասում է շրջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Անի Խաչատրյանը:

ԱՀ մշակույթի վաստակավոր գործիչ Բաբկեն Սուսայեյանին է Գեղեցիկ Ազիզյանին Քերթի ակումբավարի հաստիքում աշխատանքի ընդունել, և 15 տարի շարունակ աշխատել են միասին: Բ. Սուսայեյանը հավաստում է՝ Գեղեցիկը գեղեցիկ էր բոլոր առումներով՝ և՛ արտաքինապես, և՛ հոգեպես, և՛ մարդկային անգնահատելի որակներով, և՛ կյանքի հանդեպ ունեցած առանձնահատուկ վերաբերմունքով, ինչով էլ առանձնանում էր մյուսներից: Հրաշալի երգում էր, պարում էր, ձեռագործ, կարունձն անում, նույնիսկ ստեղծագործում էր: Ունի բանաստեղծություններ, որոնք երգերի է վերածել:

Թատերական արվեստում միշտ առաջնային դերում ու տեղում էր: Բ. Սուսայեյանը նշում է, որ չորս անգամ Գեղեցիկին, որպես լավ թատրոն խաղացողի, ներկայացրել է այն ժամանակ տիրող՝ Ադրբեջանի համապատասխան նախարարությանը: Ապացույցը Շամախիում կազմակերպված հանրապետական ինքնագործ խմբերի թատերական ստուգատես-մրցույթն էր, որի ժամանակ նա Շիրվանգադեի «Մորգանի խնամին» կատակերգությունում մարմնավորել է Սիրուշի կերպարը: Թատերական ներկայացումից հետո ժյուրիի նախագահը մոտեցել է Գեղեցիկին և համբուրել ճակատը՝ ասելով. «Քո միակ ճանապարհը թատերական արվեստն է»:

Քերթի անբարեկարգ ակումբը նա տարիներ շարունակ ծաղկում է պահել իր ներկայությամբ: Արցախյան պատերազմից հետո դարձել է դարաբարյան Այա:

1995թ. «Դարաբարյան բարբառով զուգերգերի փառատոն»-ում Նաիրուհի Ավարտյանից հետո երկրորդ տեղում Գեղեցիկն էր: Ապա Գ. Ազիզյանը Սիսիանում և Լենինականում մասնակցել է Դարաբարյան բարբառով երգերի մրցույթին, գրավել առաջին տեղը՝ արժանանալով ՀՀ կառավարության տարբեր մրցանակների:

Այդքանով հանդերձ նա շատ հյուրասեր ու լավ տնային տնտեսուհի էր, մի խոսքով՝ բազմաշնորհ ու դրական մարդ:

Հազար ավստու...

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ ք. Մարտունի

ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԿԶ-Ի ՀԻՇՆԱՐԺԱՆ ՕՐԵՐԻՑ

Սկիզբը՝ «Լուսարար»-ի հ.հ. 6-19-ում



17 ապրիլի, երկուշաբթի

Գիտե՞ք, շատ ժամանակ երբ ասում են, որ պետք է գրեմ մի օրվա մասին, ընդհանրապես գրելու տրամադրություն ունենում են: Բայց շատ գրելուց հետո ծանծաղում են, սակայն ինձ վրա պարտականություն են զգում լրացնելու: Ու երբ տրամադրված են լինում գրելու, կարողանում են մանրամասնորեն պատմել: Բայց հիմա, մի քիչ շատ գրելով, շտապում են գրել-վերջացնել, որ ազատվեն:

Գրում են այսօրվա մասին, բայց մտքումս ուրիշ բան է, մի ուրիշ դեպք, և անհամբեր ուզում են «ազատվեն» բոլորից, որ դա էլ գրեմ: Կախվել է սրտիցս, և ուզում են գրեմ ու հանգստանամ: Եվ ահա, չեն ուզում մնացյալ օրերը մանրամասնորեն պատմել և խնդրում են բավականացե՞ք պարզ ծանոթացումով, մինչև կգա ուզած օրը, որ հեռու չէ...

Ուրեմն չեք կարացնեմ: Այսօր նորից դասախոսություն էր եղեմ մասին: Պիտի խոսեր գերմանացի մեկը Արմին Վեգների մասին, որը բազմաթիվ նկարներ է հասցրել մեզ. Եղեմի մասին նկարներ: Դասախոսությունը եղավ անզերեմով:

20 ապրիլի, հինգշաբթի

Դասերի վերջին օրն էր: Իսկ Ջատիկի արձակուրդի՝ առաջին օրը:

21 ապրիլի, ուրբաթ

Ինչպես երևում է, այդ երկու շաբաթը լի էր դասախոսություններով: Այսօր էլ Ֆրանսիայից մի պատմաբան էր ժամանել Մելբորնյան՝ դասախոսելու Ադամայի ջարդերի մասին: Ասեմ, որ այս ժամանակ դասախոսությունը եղավ հայերենով:

23 ապրիլի, կիրակի

Հարգելի՛ ընթերցող, ինչպես տեսնում ես, բավական կարճ ձևով նկարագրեցի վերջին մի քանի օրերը: Այժմ եկել է այն պահը, որի մասին ես աճապարում էի գրել: Այդ օրը... Ամեն անգամ, երբ հիշում են այդ օրը, մի անբացատրելի զգացում են զգում ներսս. սե՞ր, հիացում, խանդավառություն: Հավանաբար՝ սեր և սիրահարություն:

Դա մի հասարակ ֆիլմ էր: Պատահականներս ընկա վիդեոյի սենյակ և տեսա՝ այդ ֆիլմն էր սկսվում: Մնացի ու որոշեցի նայել:

Երբ հիշում են, ինձ են մեղադրում. ինչո՞ւ դիտեցի: Նայեցի ու... հոգեվիճակովս այդ ֆիլմին: Ավելի ճիշտ, ֆիլմում խաղացող մի աղջկա... սիրահարվեցի:

Դա ոչ իմ առաջինն էր, ոչ էլ սեր: Դա պարզ մի անչափափաս տղայի անկեղծ զգացում էր: Նման չէր մի իրական սիրահարության, երբ մի տղա աչք է դնում մի աղջկա վրա և սիրում:

Ոչ, դա նման էր այնպիսիներին, երբ մեկը տածում է դերասանի կամ մի իդեալի համոզեալ: Կարելի է կոչել դրան «սիմպատիզիրոլիտ անել»։ Բայց սա էլ ճիշտ բառը չէ: Ավելի ճիշտը... նորից սիրահարվել: Այո, սիրահարվել, ինչպես իրական կյանքում:

Այնքան ցրված էի այդ երկու օրը. դեմքիս ժպիտ չէր գալիս, չէի շփվում ոչ մեկի հետ: Ուզում էի մենակ լինել... Խորանալ երևակայական աշխարհի մեջ և լինել իմ երազների հետ: Ուզում էի հեքիաթային աշխարհի մեջ մտաբերել այդ աղջկան ու երագել...

Չորս անգամ դիտեցի այդ ֆիլմը մի օրվա մեջ. երկու անգամ իրար հետևից, իսկ մնացյալ երկու անգամ՝ փոքր ինտերվալներով: Ու ոչ մի անգամ չէի գոհանում և ուզում էի դիտել, նորից դիտել և դիտել... Հասկացա երբ ֆիլմի վերջում Նա և Ֆիլմի գլխավոր տղան... համբուրվում էին, ես ինձ կորցնում էի և նախանձում այդ տղային:

Օ՛, այդ աղջիկը իսկապես որ գերել էր հոգիս: Բայց ես գիտեի, որ դա ժամանակավոր զգացում է, և պիտի մոռանայի վաղ թե ուշ: Դա ինձ համար նորություն չէր. ես այդպիսի պահեր շատ են ունեցել, նույնիսկ իրական կյանքում...

24 ապրիլի, երկուշաբթի

Սա մի տխուր օր է, և հարկ կա նշելու դրա մասին օրագրիս մեջ: Սակայն դրա հետ կապված ոչ մի արտակարգ բան չէր նախատեսված, և ես ուրիշ բան պիտի ասեմ:

Պատահաբար մտա վիդեոյի սենյակ և տեսա... այո, այո ֆիլմը: Նորից ամեն ինչ վերհիշեցի և խանգարվեցի:

Սակայն ես ֆիլմը մինչև վերջ չկարողացա դիտել: Չկարողացա տեսնել նրանց երկու հոգով... մենակ, ավազանի մոտ... իրար մոտիկ... շշուկով խոսելիս...

26 ապրիլի, չորեքշաբթի

Ջատիկի արձակուրդն ընթանում էր բնական հունով: Որպես լավ ընդմիջում՝ մենք ծրագրել էինք դասերը վերսկսել, ավելի ճիշտ, ես ուզում էի կրկնել այն բոլոր դասերը, որոնք բաց էի թողել իմ հիվանդության ժամանակ: Բայց քչերն են, որ ծրագրում են ու կատարում: Մենք չկարողացանք կատարել մեր պլանները: Գիրք անգամ չկարողացանք, ավելի լավ է ասեմ, չկարողացա բացել: Պատճառը թղթախաղը չէր, իհարկե, այլ դրան համանման մի այլ խանգարիչ: Դա «Monopoly» կոչված խաղն է՝ ունեցվածքներ առնելու և վաճառելու, խելքի, բայց մասնավորաբար բախտի խաղ: Ինչպես էինք դարձնում չունեցողի մնամ. օրվա մեծ մասը՝ նույնիսկ քնելուց առաջ: Այնքան մեծ էր դրա հրապույրը, որ որոշ ժամանակ գիրք չէի կարդում, ինչը, պարբերաբար ասեմ թե հաճախ (որովհետև գրքի հատուկ ժամ կար. կեսօրին և գիշերը՝ քնելուց առաջ), կարդում էի:

Դուք հավանաբար կմեղադրեք ինձ՝ որպես ժամանակը անբովանդակալից անցկացնողի: Բայց ասեմ, որ երկար չտևեց: Այլ վրա հասավ մի ուրիշ չարիք, բայց ավելի լավ, քան «Monopoly»-ն:

Պարզվեց, որ դպրոցում մի ուրիշ խաղ էլ կա «Rive» անունով: Անունը չնչին կապ ունի խաղի հետ: Ավելի ճիշտ կլիներ դրան կոչել «Conguor the world» (գրավիր աշխարհը-անգլ.): Լավ, համբերությունից չհանեմ և ասեմ, թե ինչն ինչոց է:

Դա խաղ է՝ տարածքներ գրավելու հետ կապված: Դու գործիդ հրամանատարն ես և պիտի գրավես երկիրը: Նապոլեոնի համար դա շատ հեշտ ու հասարակ խաղ կլիներ, բայց մեզ համար, եթե չասեմ դժվար, ապա բարդավուն խաղ է: Փառք Աստծո, այս մեկը խելքի խաղ է:

Բայց միակ բանը, որ չսիրեցի խաղի մեջ, հետևյալն է: Դա կապված է բախտի հետ: Ուրեմն, երբ պիտի հարձակվես հակառակ ուժի վրա (խաղը կարելի է խաղալ ավելի քան 3-4 հոգով), պիտի գառ օգտագործես. երբ քո զցած գառը մեծ է լինում հակառակորդի զցածից, նա գինվոր է հանում: Եվ այսպես շարունակ, մինչև որևէ մի կողմի գործերը հաստուն են: Հաղթողը իր գինվորներից փոխադրում է գրաված տարածքը: Ասեմ նաև, որ երբ որևէ տարածք ամբողջովին քոնն է լինում (այսինքն՝ մայրցամաքը քոնն է լինում), ամեն անգամ քո հերթին կարող ես գործ ավելացնել քո բանակին: Ասեմ նաև, որ երկու սահմանակից մայր ցամաքների տերեր, այսինքն՝ իշխողներ, կարող են դաշինք կապել: Բայց երբ ուզում ես խզել այդ դաշինքը, նախ պետք է զգուշացնես («Դաշինքը խզում են»), հետո մյուս քո հերթին հարձակվես, քանի որ «բարեկամը», հիմնվելով դաշինքի վրա, սահմանի վրա գործ չի դասավորել պաշտպանվելու հարձակումից: Բայց երբ զգուշացնում ես, արդեն հակառակորդը պատրաստվում է դիմադրել հարձակման:

Ահա թե ինչով էինք զբաղվում արձակուրդի մեծ մասը:

Ճիշտն ասած, չէինք էլ ծանծաղում խաղից, քանի որ իսկապես հետաքրքիր խաղ էր, այնքան մեծան իրականության: Մինչդեռ «Monopoly»-ից արդեն վաղուց ծանծաղացել ու չէինք խաղում, քանի որ դա պարզ ու անմիտ բախտախաղ էր:

29 ապրիլի, շաբաթ

Վաղուց այսպիսի մի դեպքի էինք սպասում: Այսպիսի պահի մենք սպասում էինք այն ժամանակակիցից, երբ դպրոցի փոխտնօրենը, որը տնօրենից ավելի շատ պարտականություններ ունի, և ամեն հարցով աշակերտները նրան են դիմում, աշակերտական մի հավաքության ժամանակ հայտարարեց, որ արձակուրդի ընթացքում ծով կան լեռներ արշավի պիտի գնայինք: Եվ մենք սպասում էինք այդ օրվան, որ հայտնի չէր:

Առավոտյան ժամը 9.30-ին պատրաստ պիտի լինեինք: Ավտոբուսը պիտի գար և մեզ առներ ու երթար Թրոդոս, որ Կիպրոսի միակ լեռնային շրջանն է: Մի երկու ժամ առաջ մենք արդեն պատրաստ էինք: Արթնացել էինք ոչ թե արշավին պատրաստ լինելու համար, այլ քանի որ յուրաքանչյուր շաբաթ առավոտ, ժամը 8.00-ին E-mail-ի ժամ կա, որ ես երբեք բաց չէի թողնում:

E-mail գրեցի, նախաճաշ արեցի և ավտոբուս ստացի ու... հայդա դեպի լեռներ:

...Ես չէի պատկերացնում, որ այդքան ծանծաղվի ու անբովանդակալ պիտի լինեմ մեր արշավի: Խոսք էր բացվել, որ խորոված պիտի ուտեինք, բայց սուտ դուրս եկավ: Մենք բավարարվեցինք մի սենդուիչով, որ բաղկացած էր «կալբասից», վարունգից և պանիրից:

Ամենաշատը, որ տևեց, դոմինոն էր և թղթախաղը: Մի քանի հոգի առաջարկեցին պտտվել սարերում և անտառներում (թեև մի քանի չոր եղանիներ կային միայն): Ես մերժեցի՝ պատճառաբանելով, թե խաղում են: Բայց տեսա, որ գնալով անհետաքրքիր է դառնում խաղը, որոշեցի մի քիչ պտտվել: Բայց պարզ-

վեց, որ ընկեր չկա, և մենակ պիտի գնայի: Ու գնացի:

Քարքարոտ լեռներ են Թրոդոսի բարձունքները: Ճիշտ է, մենք ամենաբարձր կետում չէինք, այլապես հետաքրքիր կլիներ: Բայց պակաս բարձր չէին նաև այդ լեռները:

Չգիտեմ ինչու, բարձրանալիս ու իջնելիս վազում էի, կարծես մեկը լարվել էր ետևիցս: Ու այսպես մի քանի լեռնիկներ անցնելուց հետո դիմացս գտա համեմատաբար մի ավելի բարձր լեռնիկ: Որոշեցի բարձրանալ դրա վրա և դիտել շրջապատը, որն իմ կարծիքով ավելի ցածր պիտի լիներ:

Բարձրացա այս անգամ ևս վազելով և նստեցի քարքարոտ կատարին:

Ամբողջ անտառը, որ կոչվում են Կոռնոսի անտառներ, փռվել է ամբողջ չորությամբ: Կատարյալ տափաստան: Ասում են՝ Կիպրոսը ունի միջերկրծովյան խոնավ կլիմա: Բայց սխալ են ասել: Միջերկրածովյան տափաստան: Եվ միակ բանը, որով Կիպրոսը պիտի պարծենա, ծովափերն են: Անտառների տեսակետից այս կղզին հավասար է գոյի:

Ինչկից: Երկար չկարողացա նստել, քանի որ զնայվելու բան չկար, և բնությունը մենած էր թվում:

Երբ իջա և հասա իմ ընկերներին, մի ժամ չէր անցել, որ վերադառնալու հրաման արձակվեց: Դեռ ժամը 2-ն էր 5-ժամյա էքսկուրսիայի: Սա կատարյալ հիասթափություն էր մեզ համար: Միշտ մինչև 5-6-ը մնում էինք:

Բայց, այնուամենայնիվ, վերադարձանք:

3 մայիսի, չորեքշաբթի

Արձակուրդը վերջացել է: Նորից դպրոց ենք գնում: Ճիշտն ասած, լավ տրամադրության տակ էի: Հավանաբար պատճառն այն էր, որ երկուշաբթի չէր: Օ՛, ինչպե՞ս չեն սիրում, երբ երկարատև ընդմիջումից հետո դպրոց ենք գնում, այն էլ՝ երկուշաբթի օր...

12 մայիսի, ուրբաթ

Քանի որ այսօր լրանում էր 15-ամյակս, ես որոշել էմ մի փոքր ձևով նշել ծնունդս: Բախտի բերումով այսօր ուրբաթ է, այսինքն՝ մեր քաղաք գնալու օրը: Հարկավոր ապրանքները կարող էի գնել: Այս մտքով քաղաք իջա, բայց խանութի մեջ, չգիտես ինչու, միտքս փոխեցի, այսինքն՝ հորեյլանս չնշել:

Ու այսպես, թեև չնշեցի հորեյլանս, բայց ստացա նվերներ՝ բառարան (սենյակակիցներից) և դարաբաղցի աղջիկներից:

18 մայիսի, հինգշաբթի

Քարքարոտություն կոչեմ դրան, թե անկարգություն, բայց նման դեպք էր պատահել դպրոցում զբոսանքի պահից մի քիչ առաջ: Բանն այն է, որ անհայտ անծիմբ կտրել էին դպրոցը սնող մայր էլեկտրալարերը, և մի շարք բաժիններ, որ կապված էին դրա հետ, էլեկտրաէներգիան կորցրին: Այդպիսի մի բաժին էր «Հայացք»-ի խմբագրատունը, որը գտնվում է կրտսեր սաների շենքում, որտեղ կատարվել էր դեպքը:

Այս միջադեպի առթիվ փոխտնօրենը զբոսանքի պահին ժողով գումարեց հանդիսատարահի մեջ՝ քննարկելու համար այդ հարցը, որ մեծ վնաս էր հասցրել դպրոցին: Ինչպես բնական է, ևս սաաց, որ եթե անողը կամավորապես ներկայանա և ապաշխարի, վտարվելու խնդիր չի լինի, իսկ եթե դպրոցը գտներ, վտարվելն անխուսափելի պիտի լիներ...

(շարունակելի)

Կողմը ԳԱՐԻԵԼՅԱՆ

Advertisement for 'LUSARAR' magazine, including contact information for the editorial office and subscription details.